Եվրոպական Հանձնաժողովի Խորհուրդ

Բրյուսել, 21.11.2001
COM(2001) 678 վերջնական

Հանձնաժողովի Զեկույցը

Իրականություն դարձնել եվրոպական տարածաշրջանի՝ ցկյանս ուսումնառության կենտրոն լինելը

«Երբ պլանավորում ես մեկ տարվա համար, ցորեն ցանիր: Երբ պլանավորում ես տասնամյակի համար, ծառ տնկիր: Երբ պլանավորում ես ողջ կյանքի համար, ուսուցանիր և կրթիր մարդկանց:»
*Չինական ասույթ՝ Գուանցզի (*c. 645BC)

Հակիրճ բովանդակություն

Ֆեիրայի Եվրոպական Խորհուրդը (հունիս 2000թ.) խնդրել էր Անդամ Պետություններին, Խորհրդին և Հանձնաժողովին իրենց իրավասությունների շրջանակում «որոշարկեն համակցված ռազմավարությունները և պրակտիկ միջոցառումները՝ բոլորի համար ցկյանս ուսումնառություն սերմանելու ակնկալիքով: Այս մանդատը հաստատում է ցկյանս ուսումնառությունը որպես ռազմավարության առանցքային տարր, որը կիրառկվել է Լիսաբոնում՝ Եվրոպան դարձնելով աշխարհի ամենամրցունակ և շարժուն գիտելիքահեն հասարակությունը:

Այս զեկույցում մարդիկ առանցքային դեր են խաղում: Մոտ 12 000 քաղաքացիներ խորհրդատվության մասով իրենց ներդրումն են ունեցել, որը նախաձեռնվել էր ցկյանս ուսումնառության մասին Հանձնաժողովի Հուշագրով՝ թողարկված անցյալ տարի նոյեմբերին:

Դիտողությունները կարևորում են առաջիկա մարտահրավերների բարդությունը: Տնտեսկան և սոցիալական փոփոխությունները, որոնք պայմանավորված են հասարակության գիտելիքահեն լինելով, ներկայացնում են ԵՄ-ն ու նրա քաղաքացիներին և շահերի առումով՝ կապված հաղորդակցության, ճամփորդության և զբաղվածության ընդլայնված հնարավորությունների հետ և ռիսկերի առումով՝ անհավասարության բարձր մակարդակի և սոցիալական բացառման հետ: Այս փոփոխությունների ծավալը կրթության և ուսուցման վերաբերյալ պահանջում է լրիվ նոր մոտեցում: Ավելին, ներկայիս անորոշ տնտեսական վիճակը վերանայեց ցկյանս ուսումնառության կարևորությունը: Ավանդական մոտեցումներն ու հաստատությունները լավ վերազինված չեն, որպեսզի սատարեն քաղաքացիներին, որ նրանք ակտիվորեն գործառնեն գլոբալիզացիայի, ժողովրդագրական փոփոխության, թվային տեխնոլոգիաների և մթնոլորտայի ազդեցության հետևանքների հետ: Թեպետ մարդիկ, իրենց գիտելիքները և կարողությունները Եվրոպայի ապագայի հիմաքարերն են:

Ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանը

Զեկույցը նպաստում է եվրոպական տարածաշրջանը հիմնել որպես ցկյանս ուսումնառության կենտրոն, որի նպատակն է սատարել քաղաքացիներին, որպեսզի նրանք ազատորեն տեղաշարժվեն ուսումնառության ձևաչափերի, աշխատանքների, տարածաշրջանների և երկրների միջև՝ իրենց գիտելիքը և կարողությունները հասցնելով առավելագույնին և բավարարել ԵՄ նպատակներն ու ձգտումները, որ թեկնածու երկրները լինեն ավելի բարգավաճ, ներառական, հանդուրժող և ժողովրդավարական:

Այս զարգացումները կհամաբերվեն միայն այն դեպքում, եթե ցկյնաս ուսումնառության շրջանակներում միմյնաց հետ կապվեն կրթությունն ու ուսուցումը և երիտասարդության, զվաղվածության, սոցաիալական ներառման, հետազոտական քաղաքականնություններին առնչվող եվրոպական մակարդակում առկա գործընթացները, և ոչ էլ այն կարող է ներառել օրենքների և կարգավորող նորմերի ներդաշնակություն: Այն ավելի շատ պահանջում է առկա գործիքների և միջոցների համաձայնեցված և տնտեսական կիրառություն՝ ներառյալ համակարգման բաց մեթոդի կիրառումը: Լիսաբոնի՝ գիտելիքահեն հասարակության նպատակին հասնելու համար սերտ կապեր պետք է հաստատվեն ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանի և եվրոպական հետազոտական

տարածաշրջանի միջև՝ մասնավորապես գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում երիտասարդների հետաքրքրությունը շարժելու համար:

Ի՞նչ է ցկյանս ուսումնառությունը

Հուշագրի վերաբերյալ խորհրդատվական արձագանքները պահանջեցին ցկյանս ուսումնառության լայն սահմանում, որը սահմանափակված չէ տնտեսական հեռանկարով կամ միայն հասուն տարիքի ուսումնառությամբ: Ի հավելումը վերը նշվածի, բացի այն, որ նա կենտրոնանում է նախադպրոցականից մինչև հետթոշակային ուսումնառության վրա, ցկյանս ուսումնառությունը պետք է իր մեջ ընդգրկի ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության լայն հատվածը: Խորհրդատվությունը նույնպես կարևորում է ուսումնառության նպատակները՝ ներառյալ ակտիվ քաղաքացիությունը, անձնական կատարելիությունը և սոցիալական ներառումը, ինչպես նաև զբաղվածության հետ կապված ոլորտները: Այն սկզբունքները, որոնք ամրապնդում են ցկյանս ուսումնառությունը և ուղորդում են դրա արդյունավետ իրականացմանը, կարևորում են ուսումնառողի կենտրոնական դեր խաղալը, հավասար հնարավորությունների կարևորությունը և ուսումնառության հնարավորությունների որակն ու էությունը:

Ցկյանս ուսումնառության համակցված և համապարփակ ռազմավարությունները

Ֆեիրա եվրոպական Խորհրդի ժամանակ անդամ պետությունները, Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության համատեքստի մասով, համաձայնեցին ցկյանս ուսումնառության համար մշակել և իրականացնել համակցված և համապարփակ ռազմավարություններ: Այպիսի ռազմավարությունների կառույցները տեղակայված են այստեղ, որպեսզի աջակցեն անդամ պետություններին և դերակատարներին բոլոր մակարդակներում: Կառույցների ներառումը ֆորմալ ուսումնառության մթնոլորտի աստիճանական ներգրավածություն է՝ որակյալ ուսումնառության հնարավորությունները բոլորի համար անընդմեջ մատչելի դարձնելու ակնկալիքով: Հստակ է այն, որ ավանդական համակարգերը պետք է փոխակերպվեն՝ ավելի բաց և ճկուն դառնալու համար, այնպես որ ուսումնառողները կարող են ունենալ անհատական ուսումնառության ուղենիշներ, որոնք համապատասխանում են իրենց կարիքներին ու հետաքրքրություններին՝ այսպիսով, իրենց ողջ կյանքի ընթացքում օգուտ քաղելով հավասար հնարավորություններից: Կառույցները են կապված ցկյնաս ուսումնառության գնահատման չափանիշների հետ, որոնք 2001թ. կիրառվել են Համատեղ Զբաղվածության Հաշվետվությունում: Համգործակցության մոտեցումը նախատեսված է որպես առաջին կառույց: Բոլոր էական դերակատարները, որոնք գտնվում են ֆորմալ համակարգերում կամ նրանցից դուրս, պետք է համագործակցեն ռազմավարությունների շուրջ՝ աշխատել «հիմնավոր»: Հաջորդ քայլը ուսումնառողի կամ պոտենցիալ ուսումնառողի կարիքների բացահայտումն է՝ կազամակերպությունների, համայնքների, հասարակության լայն շերտերի և աշխատաշուկայի կարիքների հետ մեկտեղ: Ապա կարող են բավարարվել համապատասխան ռեսուրսները՝ ֆինանսավորման և ռեսուրսների արդյունավետ և թափանցիկ բաշխման մասով: Այնուհետև հաջորդում է այն վերլուծությունը, թե ինչպես համապատասխանեցնել ուսումնառության հնարավորությունները ուսումնառողների կարիքների և հետաքրքրությունների հետ և ինչպես ապահովել ցանկացած մարդու ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ ուսումնառելու հնարավորության մատչելիությունը: Այստեղ ֆորմալ ոլորտի համար ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման և արժևորման ակնհայտ կարիք կա: Ուսումնառության մշակույթի ստեղծումը մեծապես կախված է ուսումնառության ընդլայնվող

հնարավորություններից՝ բարձրացնելով մասնակցության մակարդակները և ուսումնառության պահանջների խթանումը: Վերջապես առաջարկվում են որակի ապահովման, գնահատման և մոնիտորինգի մեխանիզմները՝ անընդմեջ կատարելիության հասնելու ակնկալիքով:

Գործունեության առաջնայնությունները

Գործունեությունը առաջարկվել է ցկյանս ուսումնառության եվրոպական չափման համար է մինչդեռ այն բոլոր մակարդակներում աջակցում է նաև ռազմավարություններին: Առաջնայնությունները ներկայացված են 6 առանցքային հաղորդագրությունների միջոցով, որոնք հիմնավորվել և հավանություն են ստացել համաեվրոպական խորհրդատվությունից:

<u>Ուսումնառության արժեվորման</u> համապարփակ եվրոպական մոտեցումը ցկյնաս ուսումնառության տարածաշրջանի նախապայման է հանդիսանում՝ հիմնված լինելով ԵՄ շրջանակներում ազատ տեղաշարժման առկա իրավունքի վրա: Առաջարկները կենտրոնացված են ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության որոշարկմանը, գնահատմանը և ճանաչմանը , ինչպես նաև ֆորմալ վկայականների և դիպլոմների փոխանցմանը և փոխադարձ ճանաչմանը: Տեղեկատվությունը, կողմնորոշումը և խորհրդատվությունը հիմնականում բարձրացվում են եվրոպական մակարդակում՝ համատեղ այն առաջարկների, որոնք համաբերում են ուսումնառության մատչելիությունը որակյալ կողմոնորոշման:

<u>Ուսումնառության վրա ժամանակի և փողի ներդնումը</u> ցկյանս ուսումնառության կողմից պահանջված հիմնարար փոփոխությունների իրականցման պայման է ՝ մասնավորապես Լիսաբոնի եզրակացությունների և Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության կողմից անդամ պետություններին ներկայացված պահանջի՝ կրթության և ուսուցման ներդրումների ամբողջական մակարդակի բարձրացման, ենթատեքստով: Այս ամենին հասնելու հանար չկան հեշտ լուծումներ: Ի թիվս մասնավոր ներդրումների աճի մեխանիզմների՝ պահանջվում է ներդրումների աճ և թիրախային ֆինանսավորում: Այն առաջարկները, որոնք խրախուսում և աջակցում են ուսումնառության համայնքներին, քաղաքներին և շրջաններին, ինչպես նաև հնարավոր են դարձնում աշխատավայրերի վերածումը ուսումնառության կազմակերպությունների, համարվում են ուսումնառության և ուսումնառողների միջև սերտ կապի ապահովման առանցքային միջոցներ: Կարևորություն է տրվում նաև տեղական ուսումնառության կենտրոնների զարգացմնաը:

Ի հավելումն Լիսաբոնի և Սթոքհոլմի կողմից նախաձեռնված «նոր» <u>հիմնարար հմտություններին</u> վերաբերող աշխատանքին՝ նաև առաջարկներ են մշակվում այն ուղությամբ, որ ցկյանս ուսումնառության հաստատությունները հասանելի են բոլոր քաղաքացիներին իրենց կյանքի բոլոր հատվածներում և ոչ թե միայն պարտադիր ուսուցման ժամանակահատվածում: Վերջապես, նորարարական մանկավարժության վերաբերյալ առաջարկները խոսում են գիտելիքի ձեռքբերումից մինչև կարողությունների զարգացում ընկած փոփոխության մասին, և վերջինս ենթադրող ուսուցանողների ու ուսումնառողների նոր դերի մասին:

Օրակարգի առաջ քաշում

Բոլոր դերակատարներին (Հանձանժողովը և այլ եվրոպական կառույցները, Անդամ Պետությունները, ԵՏՏ և այլ թեկնածու երկրները, սոցիալական գործընկերները, ՀԿ-երը և միջազգային կառույցները) կոչ են արվում համագործակցել և առաջ քաշել օրակարգ:

Վերջինիս իրականացումը կկատարվի ցկյանս ուսումնառության շրջանակում առկա գործընթացների, ծրագրերի և գործիքների միջոցով: Այս շրջանակը կնպաստի լավագույն փորձի և փորձառնության փոխանակմանը, և այսպիսով նաև՝ համատեղ խնդիրների, գաղափարների և առաջնայնությունների որոշարկմանը: Այս ամենը համաբերելու համար Հանձանաժողովը կմշակի լավագույն փորձի, տեղեկատվության և փորձառնության տեղեկատվական բազա, որը վերաբերում է բոլոր մակարդակներում իրականացվող ցկյնաս ուսումնառությանը:

Կրթության և ուսուցման համակարգերի հստակ նպատակների վերաբերյալ զեկույցի հետևողական աշխատանանքները կլինեն այս ոլորտում համագործակցության հիմնական միջոցներից մեկը՝ մինչ Եվրոպական Զբաղվածության Ռազմավարությունը կշարունակի ուշադրության կենտրոնում պահել ցկյանս ուսումնառության հետ կապված զբաղվածությանն առնչվող ոլորտները: Համայնքային ծրագրերը՝ Սոկրատես, Լեոնարդո դա Վինչի և Երիտասարդություն, կիզորացվեն այս Զեկույցի շրջանակներում: Ընդլայնելով Եվրոպական Սոցիալական Հիմնադրամի (ԵՍՀ) ներուժը և ԵՍՀ Համայնքային Նախաձեռնությունը, որը ՀԱՎԱՍԱՐ է աջակցության՝ կուսումնասիրվի նաև իրականացումը:

Առաջընթացը կչափվի և մոնիտորինգի կենթարկվի սահմանափակ քանակով ՝ առկա կամ մշակվող, ինչպես նաև մի քանի նոր, չափորոշիչների կիրառմամբ: Իրականացումը կվերահասկվի ցանցերի և կառուցվածքի միջոցով, որոնք արդեն իսկ հիմնված են որպես խորհրդատվության գործընթացի մի մաս և նախարարությունների բարձրաստիճան ներկայացուցիչների խումբ՝ կրելով ցկյանս ուսումնառության հիմնական պատասխանատվությունը: Այս խումբը կօգնի ապահովել միջոցների փոխլարցվելիությունը ցկյանս ուսումնառության բնագավառում՝ ներառյալ աշխատանքային ծրագրի իրականացումը, Կրթության և ուսուցման համակարգերի հստակ նպատակների վերաբերյալ զեկույցի հետևողական աշխատանքների մասով՝ եվրոպական մակարդակում դրան առնչվող գործընթացների, ռազմավարությունների և առաջարկների հետ մեկտեղ: Հաջորդ քայլերը կլինեն իսպանական նախագահության ժամանակահատվածում Խորհրդի (Կրթության և Երիտասարդության Խորհուրդ, Զբաղվածության և Սոցիալական Քաղաքականոթյան Խորհուրդ) կողմից հիմնական սկզբունքներին և առաջարկներին հավանություն տալը: Ցկյանս ուսումնառության Հանձնաժողովի կողմից նաև ներդրում կլինի Բարսելոնայի Գարնանային Խորհրդին (15-16 մարտ 2002):

1. Ներածություն

2000թ. մարտի **Լիսաբոնի Խորհուրդը** Եվրամիության առաջ դրեց ռազմավարական մի նպատակ. այն է աշխարհում վերջինիս ամենամրցունակ և դինամիկ գիտելիքահեն հասարակություն դառնալը, որը վերահաստատվել էր 2001թ. մարտի Սթոքհոլմի Եվրոպական Խորհրդի ժամանակ: Այս նպատակին հասնելու համար ռազմավարության առանցքային տարրերն են կրթության և ուսուցման հարմարվողականությունը՝ անհատ քաղաքացիներին իրենց կյանքի բոլոր փուլերում առաջարկելով ձևափոխված ուսումնառության հնարավորություններ, քաղաքացիների գիտելիքի և կարողությունների վրա ներդրման միջոցով զբաղվածության և սոցիալական ներգրավման առաջխաղացում, բոլորի համար տեղեկատվական հասարակության ստեղծում և շարժունակության սերմանում:

1.1. Համատեքստ

Գիտելիքահեն հասարակությունը ի թիվս այլ տնտեսական և հասարակական ուղղությունների, ինչպիսիք են գլոբալիզացիան, ընտանեկան կառույցների փոփոխությունը տեղեկատվական հասարակական տեխնոլոգիաների ազդեցությունը Եվրամիությանը և նրա քաղաքացիներին ներակայցնում է մի շարք շահեր, ինչպես նաև մարտահրավերներ: Քաղաքացիները վատնել են իրենց հնարավորությունները հաղորդակվության, ճամփորդության և զբաղվածության մասով: Այս հնարավորություններից օգտվելը և հասարակությունում ակտիվորեն մասնակցություն ցուցաբերելը կախված է գիտելիքի և հանրավորությունների անընդմեջ ձեռքբերումից: Միևնույն ժամանակ մրցունակ առավելությունը մեծապես կախված է մրդկային կապիտալի վրա կատարած ներդրումներց: Գիտելիքը և կարողությունները այնուամենանյիվ հզոր շարժիչ ուժ են հանդիսանում տնտեսական աճի համար: Հաշվի առնելով ներկայիս անորոշ տնտեսական վիճակը մարդկանց վրա ներդրումներ կատարելը դարձել է կարևոր:

Մյուս կողմից գիտելիքահեն հասարակության հետ կապված կան նշանակալի ռիսկեր և անորոշություններ, քանի որ այն սպառնում է հանգեցնել ավելի մեծ անհավասարությունների և բացառման: Կյանքում անհավասարության կարիքները ծագում են վաղ ժամանակից՝ մասնակցելով նախնական կրթությանը որպես առանցքային գործոն: 2000թ. ԵՄ-ում միջնակարգ դպրոցի մակարդակից բարձր կրթական հաստռատություններ հաճախած 25-64 տարեկան մարդկանց համամասնությունը կազմել է 60.3 %[1] (1): Անդամ պետությունների միջև առկա նշանակալի տարբերությունները կարող են վերանալ երիտասարդ հաջողակ խմբերի ավելի լավ ուսումնառության շնորհիվ, բայց ԵՄ-ում առանց այս հիմնական կրթության գրեթե 150 մլն մարդ կանգնած է մարգինալացման վտանգի առաջ:

Ցկյանս ուսումնառությունը շատ տարիներ եղել է քաղաքականությունների քննարկման և մշակման առարկա: Դեռևս այսօր քաղաքացիները, և գիտելիքահեն հասարակության շահերից օգուտ քաղելու և մարտահրավերներին դիմակայելու համար, անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ավելի շատ կարիք ունեն քան երբևիցե: Սա է պատճառը, թե ինչու Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը հաստատեց ցկայնս ուսումնառությունը որպես եվրոպական սոցիալական մոդելի հիմնական բաղադրիչ:

Քաղաքացիների զբաղվածությունը և հարմարվողականությունը տնտեսական առումով վճռորոշ է Եվրոպայի համար, քանզի այն ապահովում է վերջինիս՝ աշխարհում ամենամրցունակ և դինամիկ գիտելիքահեն հասարակություն դառնալը: Աշխատուժը պակասեցնում, իսկ կարողությունները անհաղթահարելի են դարձնում այն ռիսկերը, որոնք տնտեսական կյանքում ցանկացած կետում սահմանափակում են ԵՄ հետագա աճի հնարավորությունը: Այնուամենայնիվ, ցկայնս ուսումնառությունը առանցքային դեր է խաղում զբաղվածության համակարգված ռազմավարության մշակման գործում՝ մասնավորպաես հմուտ, ուսուցանված և հարմարվող աշխատուժի առաջխաղացման մաով: Սա նշանակում է այն պատնեշների վերացում, որոնք խոչընդոտում են մարդկանց՝ չթողնելով մուտք գործել աշխատաշուկա և սահամանափակելով դրա սահմաններում հնարավոր առաջընթացը:

Համենայն դեպս ցկյանս ուսումնառությունը ավեին է քան տնտեսագիտությունը: Այն նաև առաջ է քաշում եվրոպական երկրների նպատակները և ցանկությունները, այն է դառնալ ավլեի ներառական, հանդուրժող և ժողովրդավար: Եվ դա խոստանում է այնպիսի մի Եվրոպա, որում քաղաքացիները հնարավորություն և կարողություն ունեն իրականացնել իրենց երազանքները և մասնակցել ավելի լավ հասարակության կառուցման գործում:

Իրականում վերջին OECD զեկույցը անդրադառնում է այն փաստին, որ ուսումնառությունը և մարդկային կապիտալում ներդնումը պայմանավորված չէ միայն աճ արձանագրած ՀՆԱ-ի հետ, այլ այն նաև պայմանավորվում է քաղաքացիական մասնակցության, արձանագրված լավակեցության և հանցագործության[2] ցածր մակարդակներով:

Երբ կրթության բարձրագույն մակարդակները և շարունակական ուսուցումը հասանելի են բոլորին, ապա դրանք իրենց կարևոր ներդրումն են ունենում անհավասարությունների կրճատման և մարիգինալացման խոչընդոտման գործում: Բոլոր դեպքերում սա բարձրացնում է այն հարցը, թե ավանդական կրթության և ուսուցման ինչքան լավ հագեցած համակարգեր են հարկավոր, որպեսզի նրանք կարողանան հետ չմնալ վերը նշված զարգացումներից: Մարտահրավերների սանդղակը կարևորվում է մասնակցության վերաբերյալ տվյալներով՝ չնայած այն սահմանափակ է տարիքային խմբերի և ուսումնառության տեսակների բազմազանությամբ, այն, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ 2000թ. աշխատուժի հետազոտությունը գտնում է, որ ԵՄ-ում 25-64 տարեկաններից միայն 8 %-ն է մասնակցում կրթությանը և ուսուցմանը, ինչ որ տեղ նաև բոլորի համար ցկյանս ուսումնառության տեսլականին[3]:

Այս ենթատեքստում Եվրոպայով մեկ տարածում է գտել այն ճանաչումը, որ կրթության և ուսուցման քաղաքակնությունների նկատմամբ հիմնովին նոր մտեցումը պետք է զարգացվի և իրականացվի ցկյանս ուսումնառության շրջանակում: Մինչդեռ ավանդական քաղաքականությունները միտում ունեն կենտրոնանալ ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների վրա, ցկյանս ուսումնառությունը կարևորում է ավելի լավ հասարակություն ստեղծելու՝ մարդկանց և հավաքական ձգտումը:

Ցկյնաս ուսումնառությունը համապարփակ ձևով ներկայացնում է ուսումնական հնարավորությունների մատակարարումը և պահանջը: Այն արժեվորում է այն գիտլիքը և կարողությունները, որոնք ձեռք են բերվել ժամանակակից կյանքի բոլոր ոլորտներում և որ, այնուամենայնիվ, դրանք նշանակալի ձևով համահունչ են ժամանակակից հասարակությանը: ԵՄ-ում ցկայնս ուսումնառության արդյունավետ իրականացումը պահանջում է ավլի լավ և ավելի հավասարապես բաշխված ներդրում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծախսերի մակարդակը համընկնում մի քանի անդամ պետությունների մոտ՝ Կանադա, Հարավային Կորեա, Նորվեգիա և Միացյալ Նահանգներ[4]:

Սա է այն պատճառը, թե ինչու Ֆեիրայի Եվրոպական Խորհուրդը 2000թ. հունիսին կոչ արեց «Անդամ պետություններին, Խորհրդին և Հանձնաժողովին իրենց իրվասաությունների շրջանակում որոշարկեն համակցված ռազմավարություններ և պրակտիկ միջոցներ՝ բոլորի համար ցկյանս ուսումնառության հորդորման ակնկալիքով[5]:» Այս Զեկույցը իր վրա է վերցրել այդ իրավասությունը:

Համեվրոպական խորհրդատվություն

1996թ. Ցկյանս Ուսումնառության Եվրոպական Տարվա[6] եզրակացությունների և եվրոպական և ազգային մակարդակներում ձեռք բերված համապատասխան փորձի հիման վրա՝ 2000թ. նոյեմբերին Հանձնաժողովը հրապարակեց Ցկյանս Ուսումնառության Հուշագիրը: Սա հիմք հանդիսացավ համաեվրոպական խորհրդատվության համար, որը կազմակերպվել է քաղաքացիների հետ հնարավորինս սերտ կերպով՝ Եվրոպական կառավարման վերաձևավորմանն ուղղված Հանձնաժողովի նպատակին համապատասխան: Անդամ Պետությունները, ԵՏՏ և այլ թեկնածու երկրներ ամբողջությամբ ներգրավված են եղել

խորհրդատվության գործընթացում, ինչպես նաև նշանակալի ներդրում են ունեցել վերջինիս վրա և դեռ կշարունկեն իրենց ներդրումն ունենալ ցկյանս ուսումնառության զարգացմանը:

Եվրոպական մակարդակում, Հանձանաժողովը խորհրդտվություն տրամադրեց սոցիալական գործընկերներին, Եվրոպական Խորհրդարանին, Տնտեսական և Սոցիալական Հանձնաժողովին և Տարածաշրջանների Հանձնաժողովին, ինչպես նաև կազմակերպել է եվրոպական քաղաքացիական հասարակոթյան խորհրդատվություն, որը իր գագաթնակետին հասավ 2001թ-ի սեպտեմբերի 10-ին Բրյուսելում կայացած կոնֆերանսի ժամանակ: Հանձնաժողովը նաև խորհրդատվություն է տրամադրելտարբեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Եվրոպայի Խորհրդին, OECD-ին և UNESCO-ին:

Բոլորը միասին 3000 անհատական թեթիկներ են ուղարկվել Հանհձաժողովին, Անդամ Պետություններին, ԵՏՏ և թեկնածու երկրներին և եվրոպական կառույցներինև մարմիններին ներկայացնելով քաղաքացիական հասարակություն և սոցիալակն գործընկերներ: Մոտ 12000 քաղաքացիներ են մասնակցել գործընթացի[7] մաս կազմող հանդիպումներին և կոնֆերանսներին: Խորհրդատվության արդյունքները, այնուամենայնիվ էական հիմք են հանդիսանում ներկայիս Զեկույցի համար:

Ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջան

Խորհրդատվությունը շեշտեց, որ այս ոլորտում եվրոպական մակարդակում էական դեր է խաղում համագործակցությունն ու համակարգումը: Սա տեղի է ունենում մի քանի հավելյալ, բայց և փոխլրացնող գործընթացների, ռազմավարությունների և ծրագրերի միջոցով: Ցկյանս ուսումնառության թեման արծարծվում է այս բոլոր նախաձեռնությունների դեպքում՝ ամեն անգամ բարձրացվելով հատուկ մի տեսակետից: Հետևելով Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի պահանջին, Կրթության Խորհուրդը ընդունել է Կրթության և Ուսուցման Համակարգերի Հետագա Կոնկրետ Նպատակների Մասին Զեկույցը[8]: Ապա 2001թ. սեպտեմբերին Հանձնաժողովը նաև ընդունել է մանրամասն աշխատանքային ծրագիր պարունակող մի զեկույց, որը վերաբերում էր Նպատակների Հաշվետվության Շարունակական Աշխատանքներին[9], որն էլ հիմք կհանդիսանա Սթոքհոլմի Խորհրդի[10] հրավերով 2002թ. Գարնանային Եվրոպական Խորհդրին ներկայացվելիք զեկույցի համար: Եվրոպական Զբաղվածության Ռազմավարությունը[11] ցկյնաս ուսումնառության մասով առաջ է քաշում հորիզոնական նպատակ և զբաղվաության և աշխատաշուկայի վրա կենտրոնացած հատուկ մի ուղենիշ: Եվրոպական Սոցիալական Օրակարգը[12] ցկյանս ուսումնառության միջոցով նպատակ ունի կրճատել անհավասարություններն ու առաջ քաշել համախմբվածություն: Հմտությունների և շարժունակության գործունեության ծրագիրը[13] նպատակ է հետապնդում բոլորի համար ապահովել եվրոպական աշխատաշուկայի բաց և հասանելի լինելը: Էլեկտրոնային Ուսուցման Նախաձեռնությունը[14] որպես էլեյտրոնային Եվրոպայի Գործունեության պլանի մի մաս ձգտում է առաջ քաշել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) թվային մշակույթ՝ կրթության և ուսուցման մասով: Վերջապես Երիտասարդության Մասին Ավարտուն Նախագիծը երիտասարդության քաղաքականության ոլորտում Համայնքում իրկանացնում է համագործակցություն կենտրոնանալով երիտասարդների մասնակցության, նրանց կրթության, զբաղվածության և սոցիալական ներգրավման վրա:

Չնայած այս բոլոր ստանդարտներն ունեն իրենց հատուկ բնորոշություններն ու նպատակները, միասին վերցրած նրանք նպաստում են ցկյանս ուսումնառության եվրոպական տրածաշրջանի իրկանացմանը: Այս զարգացումները համաբերելու համար

կրթությունը և ուսուցումը ցկյանս ուսումնառության շրջանակներում կգործառնեն միասին՝ համատեղ լուծումներ առաջարկելով դրանց գործունեությունների,ռազմավարությունների և պլանների համապատասխան տարրերի հետ մեկտեղ: Մասնավորապես, որպեսզի հասնեն գիտելիքահեն հասարակության Լիսաբոնի նպատակին, ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանը սերտորեն կկկապվի եվրոպական հետազոտությունների տարածաշրջանի հետ՝ հատկապես այս տարածաշրջանի շարժունակության ռազմավարության Ձեկույցի մասով[15]: Այս ռազմավարության մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն բաղադրիչ կարող է հանդիսանալ գիտելիքի և գիտության անդրեվրոպական ցանցերի ստեղծումը:

Ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանի նպատակն է հզորացնել քաղաքացիներին, որպեսզի նրանք դիմակայեն գիտելիքահեն հասարակության մարտահրավերները՝ ազատորեն տեղաշարժվելով ուսումնառության ձևաչափերի, աշխատանքների, շրջանների և երկրների միջև՝ ուսումնառությանը հետամուտ լինելու պատճառով, և հասնել ԵՄ և թեկնածու երկրների նպատակներին և ցանկություններին՝ լինել ավելի բարգավաճ, ներառող, հանդուրժող և ժողովրդավարական: Ավելի կոնկրետ, սա նշանակում է Անդամ Պետությունները ցկյանս ուսումնառության մասով պետք է զարգացնեն և իրականացնեն համակցված և համապարփակ ռազմավարություններ և սա պահանջում է, որ համաձայնեցված գործողություն, որը նախաձեռնվել է եվրոպական մակարդակում՝ ըստ համաձայնեցված առաջնայնությունների: Այս գործողությունը պետք է և աջակցի և արժեվորի անդամ պետությունների ջանքերը:

Ի՞նչ ինկատի ունենք մենք ցկյանս ուսումնառություն ասելով

Ցկյանս ուսումնառության Հուշագիրը մեջբերում է ցկյնաս ուսումնառության սահմանումը, որը մշակվել է Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության Համատեքստում, որպես խորհրդատվության[16] ընթացքում քննարկումների մեկնարկային կետ: Խորհրդատվությունը մասնավորապես ողջունում է այն գաղափարը, որ ցկյնս ուսումնառությունը պետք է ներառի ուսումնառության բոլոր փուլերն ու ձևերը՝ սկսած նախադպրոցականից մինչև հետթոշակայինը: Համենայն դեպս կային մտավախություններ, որ զբաղվածության և աշխատաշուկայի՝ ցկյանս ուսումնառության չափումները գերակշռում են այս սահմանման մեջ: Մասնավորապես, ցկյանս ուսումնառության նպատակների տարորոշման հետ կապված արձագանքները Հուշագրում արտացոլվելու միտում ունեն՝ ինչպես նաև մեջբերելով ավելի լայն ոլորտներ, ինչպիսիք են ուսումնառության հոգևոր և մշակութային ոլորտները: Վերջնական արդյունքում ր պետք է ձեռք բերվի փոխզիջում չորս լայն և փոխադարձ աջակցվող նպատակներին հասնելու համար՝ <u>անձնական կատարելիություն, ակտիվ քաղաքացիություն, սոցիալական ներառում և աշխատանքի տեղավորվելու ունակություն/հարմարվողականություն</u>: Ցկյնս ուսումնառությունը առաջ է քաշում այս նպատակները, որոնք արտացոլված են ներքևում բերված ընդգրկուն սահմանման մեջ՝ ցկյանս ուսումնառության բոլոր հղումները պետք է հասկացվեն այս սահմանման լույսի ներքո:

«գիտելքի, հմտությունների և կարողությունների ընդլայնման նպատակով կյանքի ընթացքում իրկանացված բոլոր ուսումնառական գործողությունները՝ անձնական, քաղաքացիական, հասարակական և/կամ զբաղվածության հետ առնչվող հեռանկարով»:

Այս սահմանման ընդգրկունությունը կարևորում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գործողությունները[17]:

Խորհրդատվությունը ևս ակնկալում է ցկյնաս ուսումնառության ամրակցվող հիմնարարա սկզբունքների քննարկում: Կարևոր բնորոշ գիծ է հանդիսանում ուսանողակենտրոնությունը՝ ֆորմալ, ինֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառման փորձի շրջանակում:

Հավասար հնարավորությունները և գենդերային հավասարության և բոլորի համար ուսումնառության մատչելիության տեսանկյունից՝ առանց խտրականության, էական մտավայնությունն է այն առումով, թե ինչպես են գիտելիքը և կարողությունները ազդում քաղաքացիների կենսական հնարավորությունների վրա: Խորհրդատվության արձագանքները նաև կարևորում են բարձր որակի և նշանակության խնդիրը, քանի որ ուսումնառությանն ուղղված ժամանակի և փողի ներդրումը ավելի արդյունավետ են գործում այն դեպքում ,եթե ուսումնառության պայմանները և հիմքում ընկած քաղաքականության պլանավորումը և համակարգերը ապահովում են բարձր որակ:

Այս սկզբունքները իրենց արձագանքն են գտել Խորրհրդի կողմից առաջ քաշված եզրակացություններում՝ հետևելով 1996թ. Ցկյնաս Ուսումնառության Եվրոպական Տարածաշրջանի և 2001թ. OECD-ի Կրթության Քաղաքականության Վերլուծությանը[18]: Նրանք տալիս են ցկյանս ուսումնառության հայեցակարգը և ուրվագծում են դրա իրականացումը:

Փաստաթղթի կառուցվածքը

Հետևյալ բաժինները մասնավորապես կենտրոնանում են պրակտիկ միջոցառումների վրա, թե ինչպես բոլոր մակարդակներում իրկանացնել ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանի գաղափարը: քաղաքականությն մշակմանը աջակցություն ցուցաբերելու համար եկրորդ բաժնում նշվում են համակցված և համապարփակ ռազմավարությունների բաղկացուցիչ մասերը: Երրորդ գլխում առաջ են քաշվում գործունեության առաջնայնությունները՝ որպես աջակցություն առաջարկված այս ռազմավարություններին: Չորրորդ գլուխը վերաբերում է օրակարգի առաջ քաշման հարցերին՝ առկա գործընթացների, գործիքների և ծրագրերի հզորացման և չափորոշիչների մշակման միջոցով: Եվ վերջապես 5-րդ գլուխը արծարծում է հաջորդող քայլերը:

2. Ցկյանս Ուսումնառության Համակցված և Համապարփակ Ռազմավարություններ

Հետևելով Ֆեիրա Եվրոպական Խորհրդին և Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության համատեքստով Անդամ Պետությունները համաձայնել են մշակել և իրականացնել ցկյանս ուսումնառության համալցված և համապարփակ ազգային ռազմավարություններ: Թեպետ նման ռազմավարությունները աչդեն իսկ առկա են Անդամ Պետություններից կեսի մոտ, բայց դեռևս նրանք գտնվում են իրականացման վաղ փուլում, իսկ ռազմավարուիթյուններ չունեցող Անդամ Պետություններում մաս առ մաս պետք է ձեռնարկվեն միջոցառումներ[19]:

Այս գլուխը ներկայացնում է նման ռազմավարությունների մշակման և իրականացման կառուցվածքային մասերը: Վերլուծությունները կատարվել են խորհրդատվության լույսի ներքո՝ արձագանքելով Հուշագրին ինչպես նաև Անդամ Պետությունների Զբաղվածության և Սոցիալական Ներգրավման Ազգային Գործունեության Պլաններին և այլ ներդնումներին: Կառուցվածքային մասերը ձևավորրվել են համապատասխան 4 սկզբունքների, որնք են ակտիվ քաղաքացիությունը, անձնական կատարումը, աշխատանքի տեղավորվելու

ունակությունը և սոցիալական ներգրավումը, ինչպես նաև համապատասխան ցկյանս ուսումնառության սկզբունքներին, որը բերված է 1.4 բաժնում:

Այս կառուցվածքային տարրերը համապատասխանում են 2001թ. Զբաղվածության Համատեղ Զեկույցին՝ Անդամ Պետությունների ցկյանս ռազմավարության համակցվածության և համապարփակության գնահատման մասով: «*Համագործակցությունը, ուսումնառության մշակույթի ստեղծումը և կատարելիության ձգտումը* արդեն իսկ համակցվածության ձեռք բերում է, մինչ ներքուստ դեպի ուսումնառության պահանջը, հասանելիություն հասնելը և ադեկվատ ռեսուրսներ» ապահովում են մոտեցման համապարփակ լինելը:

Կառուցողական մասերը սկզբունքորեն կիրառվում են ազգային մակարդակում, այսպիսով ստեղշված են որպեսզի աջակցեն Անդամ Պետություններին կատարեն իրենց պարտականությունները՝ զարգացնեն և իրականացնեն համակցված և համապարփակ ռազմավարություններ: Այստեղ առաջարկված մոտեցումը համենայն դեպս էական է բոլոր մակարդակների համար: Իրականում, եթե ռազմավարությունները պետք է լինեն համակցված, իրականացման տարներ մակարդակների միջև փոխլարցվելիությունը դառնում է անհրաժեշտ: Այս առումով, կառուցվածքային մասերը համախմբվում են եվրոպական չափումները: Օրինակ՝ ամբողջ եվրոպական աշխատաշուկայով մեկ ուսումնառության բաժնի պահանջի հայացքի ներքո կարողությունների կարիքների գնահատումը և կանխատեսումը, որը կոնկրետ պետք է բարձրացվի առաջիկա Հմտությունների և Շարժունակության Գործունեության Պլանի կողմից, էական կլինի ազգային և ենթազգային մակարդակներում:

Նմանապես ազգային և եվրոպական մակարդակներում համագործակցությունը ակնհայտորեն կներառի դերակատարների համագործակցություն: Եվրոպական հիմնադրամները ազդեցություն կունենան բոլոր մակարդակներում համապատասխան ռեսուրսների վրա և ազգային ռազմավարությունների գնահատումը կշարունակի տեղի ունենալ Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության համատեքստում:

Կիսելով դերեր և պարտավորություններ

Հետևյալ սահմանումը միայն ցուցադրական է. դերակատարների դերերը և պարտականությունները տատանվում են համաձայն ազգային և տարբեր այլ փորձառնությունների, համակարգերի և համատեքստերի: Ցկյանս ուսումնառության համագործակցությունը բոլոր մակարդակներում պետք է ինկատի ունենա և զարգացնի այսպիսի դերեր և պարտականություններ՝ հետևանքների լույսի ներքո:

Հանրային մարմինները պատասխանատու են անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման համար, ինչպես նաև բոլոր քաղաքացիների համար պարտադիր կրթության և ուսուցման, հետ պարտադիր հիմնական հմտությունների հնարավորություն ապահովելու և նաև նախադպրոցական և մեծահասակների ուսումնառության հնարավորությունների տրամադրման հասանելիության համար: Ի հավելումն նրանք պետք է առաջնորդեն բոլոր մակարդակներում ցկյանս ուսումնառության ռազմավարությունների մշակմանն ու իրականացմանը: Սա ներառում է ապահովել քաղաքացիների՝ գիտելիքի և կարողությունների ձեռք բերման և թարմացման հասանելիությունը ողջ կյանքի ընթացքում (ինչպես նշվում է Ամստերդամի Պայմանագրի նախաբանում)՝ կողմնորոշման ծառայությունների աջակցության միջոցով: Հանրային մարմինները նույնպես պատասխանատու են գործազուրկների համար ակտիվ աշխատաշուկայի միջոցների և թե

աշխատաշուկայի ներսում և էե դրանից դուրս բոլորի համար ուսումնառության առաջ քաշման համար: Գործատուները ունեն հիմնական պարտականություն. այն է կարողությունների և նրանց աշխատուժի մշակման իրականացում՝ իրենց վրա վերցնելով ավելի ընդլայնված պարտականություններ, իրինակ, երբ նրանք բացում են իրենց ուսուցման հնարավորությունները և միջոցները հասարակության լայն շրջանակների համար[120]: Առևտրային միությունները ավելի ու ավելի շատ ուսումնառության հնարավորրություններ են տրամադրում իրենց անդամներին, ինչպես նաև ոչ անդամներին: Սոցիալական գործընկերների հետ մեկտեղ իրականցնել սոցաիալական երկխոսություն բոլոր մակարդակներում և բանակցել ու իրականացնել համաձայնագրերը՝ աշխատավայրում կրթության և ուսուցման մասով: Բոլոր տիպի ուսումնառություն իրականացնողները պատասխանատվություն են կրում իրենց իրակնացրած ուսումնառության որակի և նշանակելիության համար, ինչպես նաև ուսումնառության այլ առաջարկների շրջանակում դրա համակցվածության վերաբերյալ: Համյանքային և կամավորական խմբերը ինքնատիպ հնարավորություններ ունեն մատուցել թիրախային կրթություն, (պոտենցիալ) ուսումնառողների շրջանակներում առաջ քաշել ուսւոմնառության խնդիր և բարձրաձայնել դրանց կարիքները և հետաքրքրությունները: Ինչպես նշված է ներքևում «համագործակցային աշխատանք» կառուցվածքային մասում, բոլոր դերակատարները կիսում են պատասխանատվություն ցկյանս ուսումնառության մասով միմյնաց հետ աշխատելու և անհատների ուսումնառության սեփական պատասխանատվության կրելուն աջակցելու համար:

Խորհրդատվության ակնհայտ եզրակացությունը և բոլոր կառուցողական մասերից բխում է այն հանգամանքը, որ Անդամ Պետությունները պետք է հիմնարար ձևով փոխանցեն իրենց ուսումնառության համակարգերը՝ ներառյալ նախնական կրթությունը՝ որակյալ ուսումնառության հնարավորրությունները անընդհատության հիմքով հասանելի դարձնելու ակնկալիքով: Այն ստացած առաջարկությունները, որոնք հաստատում են ֆորմալ ուսումնառության աստիճանական ներգրավվածության կարիքը, որպեսզի դրանք դարձնի ավելի բաց և ճկուն, այնպես որ ուսումնառողները կարողանան ունենալ իրենց անհատական ուսումնառության ուղիները, համապատասխանում են իրենց կարիքներին և շահերին և այսպիսով օգուտ են քաղում իրենց ողջ կյանքի ընթացքում առկա հավասար հնարավորություններից:

Համագործակցությունը ուսումնառության շրջանակում

Համագործակցությունը արտացոլում է ընդհանուր շահեր և պատասխանատվություն ցկյանս ուսումնառության համար: Համատեղ/համակարգված գործունեությունը հաճախ տարբեր պայմաններին ամենից արձագանքողն է և ամենաարդյունավետն է՝ հիմնված լինելով հակասական փորձագիտական գնահատականի, հզորության և ռեսուրսների վրա: Ցկյանս ուսումնառության ռազմավարությունեներըպետք է միմյնաց միավորի բոլոր դերակատարներին[21] և վերջիններիցս էլ պետք է աջակցություն ստանա:

- Ինչպես նաև առաջ քաշելով համագործակցությունը բոլոր մակարդակներում՝ ազգային, տարածաշրջանային և տեղական, Կառավարությունները պետք է օրինակ առաջնորդվեն՝ քաղաքականություններում նախարարությունների միջև ապահովելով արդյունավետ համագործակցություն և համակցվածություն:
- Տեղական մակարդակի համագործակցությունը էական է ռազմավարությունների համար՝ «հիմնավոր» աշխատելու նպատակով: Սա պետք է ներառի տեղական մարմիններին, դպրոցներին, համալսարաններին, այլ ուսումնառություն իրականացնողներին և հարակից ծառայություններին (ինչպիսիք են տեղեկատվություն, կողմնորոշում և

խորհրդատվություն), հետազոտական կենտրոններին, փորձագիտական գնահատականներին (որպես իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մաս), հանրային զբաղվածության ծառայություններին, ՀԿ-ներին, որոնք աշխատում են տեղական մակարդակում (օրինակ՝ կամավորական և համայնքային կազմակերպությունները), (պոտենցիալ) ուսումնառողների[22] մասնակի խմբերի ներկայացուցիչներին և այն դերակատարներին, որոնք գործ ունեն գենդերային հավասարության խնդիրների հետ:

- Նաև սոցիալական գործընկերները պետք է ակտիվորոն ընդգրկվեն, երբևէ որ էական է՝ հաշվի առնելով «սպառողների», ներդրողների, բանակցողների ուսումնառություն առաջ քաշողների բազմազան դերը:
- Ցկյանս ուսումնառությունը իրականությունն դարձնելու ջանքերը պետք է աջակցվեն <u>եվրոպական մակարդակում</u>՝ ներառյալ գաղափարների, փորձառնության և լավագույն փորձի ցկյնաս ուսումնառությունը եվրոպական տարածաշրջան հաստատելու գործողությունների փոխանակման միջոցով (տես 3 և 4 բաժինները):

Հայացք դեպի ուսումնառության պահանջ

Քաղաքացիների, համայնքների, հասարակության լայն շերտերի և աշխատաշուկայի կարիքների ըմբռնումը ցկյանս ուսումնառության ցանկացած ռազամավարության հիմքը պետք է հանդիսանա: Այսպիսի ըմբռնումը ակնհայտորեն պետք է ծագի տեղական մակարդակից: Սա արդյունավետ ուսումնառողակենտրոն մոտեցման և հավասար հնարավորությունների ապահովման նախապայման պետք է հանդիսանա: Աշխատանքը պետք է կենտրոնացած լինի՝

- Գրագիտության, արակական մտածելակերպի, ՏՀՏ և այլ հիմնարար հմտությունների[23] կարիքների վրա. հետագա ուսումնառության հիմքը, որը ողջ կյանքի ընթացքում հաճախ թարմացվելու կարիք կունենա: Քաղաքացիները/խմբերը, որոնք ամենահեռացվածն են ուսումնառությունից և որոնց կարիքները և շահերը տարբերվում են, կարող են պահանջել ձևափոխված մոտեցումներ:
- Ցկյանս ուսումնառության ազդեցությունը ուղղելով <u>ուսումնառության համաբերողներին</u>[24]՝ <u>ինչպիսիք են ուսուցիչները, ուսուցանողները, մեծահասակ կրթողները և կողմնորոշում իրականացնողները</u>: Ռազմավարությունները և համագործակցությունները պետք է արձագանքեն նրանց դերին և աջակցեն նրանց հարմարվողականության մեջ:
- Գործատուների կարիքները ընդհանուր առմամբ, ինչպես նաև ՓՄՁ-ների մասնավոր կարիքները, որոնք աշխատանքի են հրավիրում ԵՄ աշխատուժի նշանակալի մի համամասնություն, ովքեր դեռ հաճախ կանգնում են ֆինանսավորում, ազատ ժամանակ գտնելու և իրենց կարիքներին համապատասխանող դասընթաց տարորոշելու դժվարությունների առաջ:
- Ըմբռնելով (պոտենցիալ) ուսումնառողների շահերը, որոնք արտահայտված են հետազոտություններում, գնահատականներում, կողմնորոշման ծառայություններում և խարհրդատվությունների մասով արված առաջարկություններում, անհավասարակշռությանն առնչվող տվյալների վրա ուսումնառության մասնակցության մասով (օրինակ՝ գենդերային խառնուրդ ՏՀՏ ուսուցման մեջ):
- Հաշվի առնելով գիտելիքահեն հասարակության հետևանքները ուսումնառողների կարիքների մասով (նոր հիմնարար հմտություններ՝ ներառյալ գործարարությունը, գիտությունը և տեխնոլոգիան) և աշխատուժի շուկաները

(օրինակ իրավասությունների անհրաժեշտությունը՝ կանխատեսելով աշխատաշուկայի ներսում զերծ մնալ թերություններից, գերագնահատումից՝ վստահեցնելով, որ նրանք չեն բացառվի):

Համապատասխան միջոցներ

Բոլորի համար ցկյանս ուսումնառության տեսլականին հասնելը մտածելակերպի, համակարգերի, կառուցվածքների, և այս ամենը կիրառող աշխատանքի, պահան հիմնարար փոփխությունների հետ մեկտեղ, պահանջում է ներդրումների բարձր մակարդակ, ինչպես որ պահանջում են Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության Լիսաբոնի եզրակացությունները: Այս ամենը պետք է բաշխվի արդյունավետորեն և բանականորեն[25]: Մասնավորապես այն նշանակում է՝

- Պետք է աճի պետական և մասնավոր ներդրումների ամբողջական ծավալը: Այս աճը պետք է հիմնված լինի կառավարության, պետական մարմինների, գործատուների, սոցիալակն գործընկերների և քաղաքացիների համատեղ պատասխանատվության վրա:
- Համապատասխան ռեսուրսները պետք է լինեն հասանելի, և/կամ առկա ռեսուրսները պետք է վերաուղղվեն ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությանը՝ ներառյալ նախադպրոցական ուսումնառությունը: Միևնույն ժամանակ էական է ռեսուրսների հավաքագրման քափանցիկության խնդիրը, եթե որոշված առաջնայնությունները պետք է հաշվի առնվեն ֆինանսավորման մասով:
- Ներդրումների մասով անհրաժեշտ են նոր մոտեցումներ, որոնք կապահովեն գիտելիքահեն հասարակության զարգացման պահանջներով առած եկած գիտելիքի և հնարավորությունների նոր տիպեր՝ երկուսն էլ կապված են ուսումնառողների և ուսումնառության համաբերողների հետ: Ուսումնառության նկատմամբ ֆինանսական և այլ մոտեցումներ պետք է մշակվեն բոլոր քաղաքացիների համար աշխատաշուկայի սահմաններում և դրանից դուրս:
- Ներդրումների աճը պատշաճ կերպով տեղական մակարդակում պետք է ներառվի ռազմավարություններին՝ առավելագույն ազդեցություն ունենալու համար:
- Ուսուցանման և ուսուցման մասնագիտություններում բոլոր մակարդակներում պետք է վերհանվեն նոր առաջադրանքները և դերերը, հավաքագրումն ու պահպանումը՝ մասնավորոպես ի նկատի ունենալով հավաքագրման կարիքները:

Խթանել ուսումնառության հնրավորություններից օգտվելուն

Ուսումնառության հասանելիության նկատմամբ պետք է ցուցաբերվի երկակի մոտեցում: Այն, որն արդեն առաջարկ է դարձնել ավելի տեսանելի, ճկուն, ներառված և արդյունավետ՝ միևնույն ժամանակ նաև մշակել ուսումնառության նոր գործընթացներ, արտադրանքներ և միջավայր[26]: Ռազմավարությունները նաև պետք է բարձրացնե հնարավորությունների հավասարության հարցը (օրինակ՝ գենդերային հավասարություն) և հատուկ խմբերի թիրախ հանդիսանալը՝ բոլորին ցկյանս ուսումնառության հնրաավորությունների հասանելիությունը ապահովելու համար, հատկապես նրանց համար, ովքեր գտնվում են բացառման վտանգի տակ , ինչպիսիք են օրինակ ցածր եկամուտներ ունեցող մարդիկ, դպրոցը վաղ տարիքում լքողները, միայնակ ծնողները, գործազուրկները, ծնողներ, որոնք վերադառնում են աշխատաշուկա, ցածր մակարդակի կրթությամբ և ուսուցմամբ բանվորները, ավագ քաղաքացիները (ներառյալ ծեր բանվորներին) և նախկին հանցագործները: Այսպիսի թիրախային խմբերի ստեղծումը պետք է վեր հանի ոչ թե միայն մարդկանց կարիքները, ովքեր ապրում են քաղաքային տարածքներում, այլ նաև նրանք,

ովքեր ապրում են գյուղական վայրերում, որոնք մասնավորպես էլ ավելի շատ ուսումնառության կարիք են զգում: Առանցքային կետերը ներառում են՝

- վերացնել սոցիալական, աշխարհագրական, հոգեբանական և այլ տիպի պատնեշները, օրինակ՝ առաջ քաշելով ՏՀՏ, աշխատավայրում ուսումնառության և տեղական ուսումնառության կենտրոններ՝ ուսումնառությունը և ուսումնառողներին իրար հետ կապելով այն ժամանակ և այն վայրերում, որոնք հարմար են մարդկանց այլ գործողությունների համար ևս:
- Ֆորմալ ճյուղի հետ մեկտեղ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը հաշվի առնելու համար հարմարվել մուտքագրման, առաջընթացի և ճանաչման պահանջներին:
- Լրացումներ կատարել ձևափոխված միջոցառումների իրականացմանը, հատկապես հիմնարար հմտությունների համար, որը թիրախ է հանդիսացել անհատականա կարիքների համար: Հավաստիանալ, որ հասանելի է մի մասնագետ, որը կարող է բավարարել բոլոր չբավարարվող պահանջները, օրինակ՝ խրախուսել բարձրագույն կրթությամբ զբաղվողներին աշխատել բացառման ռիսկի տակ գտնվողների հետ:
- սոցիալական գործընկերները պետք է աշխատեն միասին և այլ ճյուղերի հետ ևս, համոզվելով, որ դեպի ավելի ճկունության տանող միտումը, որը առկա աշխատանքային կազմակերպությունում ուղեկցվում է աշխատավայրերում գործատուների համապատասխան ներդրմամբ՝ աշխատանքում որակի առանցքային չափում[27]:
- Ճանաչել տեղեկատվական, կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունները, որպես ուսումնառության կարիքների և ուսումնառության առաջարկի առանցքային կապող օղակ:
  Նրանք նաև էական դեր են խաղում ուսումնաեողներին օգնելով գտնել իրենց տեղը անընդհատ բարդացող ուսումնառության համակարգերում:

Ստեղծել ուսումնառության մշակույթ

Ուսումնառություն բոլորի համար ռազմավարության ստեղծման համար ուղղակի միջոցներ են հարկավոր, որպեսզի հրահրեն (պոտենցիալ) ուսումնառողներին և բարձրացնեն ընդհանուր մասնակցության մակարդակը՝ ուսումնառությունը դարձնելով ավելի ցանկալի՝ ակտիվ քաղաքացիության, անձնական կատարման, և/կամ աշխատանք գտնելու կարողությամբ: Այսպիսի միջոցառումները պետք է ներառեն՝

- Արժևորել և պարգևատրել ուսումնառությունը, հատկապես ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը, բոլոր ոլորտներում. այսպիսով, ճանաչելով դրան բնորոշ արժեքը: Ուսումնառության պարգևատրումը կարող է նաև խրախուսել այն մարդկանց, ովքեր շատ են ձգտում վերադառնալ ուսումնառության:

- Առաջ քաշել ուսումնառության ավելի դրական ընկալումներ և բարձրացնել իրազեկության մակարդակը ուսումնառության ցանկացած անվանակարգերի և շահերի մասով, օրինակ՝ լրատվամիջոցների արծավների միջոցավ, սկսած վաղ տարիքից մինչև նախադպրոցական տարիք և բարձրագույն կրթության մակարդակներ, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններում և հասուն բնակչության շրջանակներում[28]:

- համապատասպան օգուտ բաղել թիրախային ֆինանսավորումից, առաջխաղացման գործողություն և այլ մեթոդներ. ինչպիսիք են՝ հասնել (պոտենցիալ) ուսումնառողներին:

- առաջ քաշել տեղեկատվության, կողմնորոշման և խորհրդատվության դերը, ուսուցում իրականաղնողները պետք է աշխատեն անմիջապես կամավորական/համայնքային կազմակերպությունների հետ՝ ուսումնառության

անհատական/սոցիալական/տնտեսական շահերի մասին իրազեկությունը բարձրացնելու և ուսումնասիրությունների և ոչ ավանդական կարիերիայի/ուսումնառության ընտրությունների զանազանությունը խրախուսելու համար:

- Ձեռնարկությունները պետք է դառնան ուսումնառության կազմակերպություններ, որտեղ ամեն մեկը ուսումնառում, զարգանում է իր աշխատանքի համատեքստի միջոցով՝ իրենց իսկ շահի համար ինչպես նաև մեկը մյուսի և ամբողջ կազմակերպության շահի համար: Այդիսի ջանքերը պետք է հասարակայնացվեն և ճանաչվեն:
- Խրախուսել հանրային ծառայություններ մատուցողներին, կամավորական և համայնքային խմբերին, գործատուներին և առևտրային կազմակերպություններին մշակել և/կամ առաջ քաշել ուսումնառության հնարավորություններ, որոնք ձևափոխված են ըստ իրենց համապատասխան ընտրողների կողմից, օրինակ՝ հաշմանդամ մարդիկ:

Ձգտել Կատարելության

Ռազմավարությունները պետք է որդեգրեն այնպիսի միջոցառումներ, որոնք ինքնին առավելագույնի կհասցնեն ուսումնառության փորձառությունը և նաև քաղաքականության/իրականացման գործընթացները և ուսումնառության հետ կապված ծառայությունները: Անհատների, գործատուների, ուսումնառության վրա բերդրում անողների համար որակը ոչ միայն պարտադրանք է, բայց նաև հրահրման գործոն: Այդ միջոցառումները պետք է ներառեն՝

- Ի թիվս այլոց, շահամոյ թիրախներ՝ մասնակցություն, ռեսուրսների տրամադրում, պահպանում և ուսումնառության ձեռքբերում: Այս թիրախներին դեմ ընթացող առաջընթացը պետք է մշտադիտարկման ենթարկվի հղման միջոցով նախապես որոշված չափորոշիչներով: Տվյալները պետք է մասնատվեն ըստ գենդերային և այլ սոցիալտնտեսական գործոնների:
- Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության համար ամուր որակի ապահովման գործիքներ (օրինակ՝ միջազգային և ազգային ստանդարտներ և ուղեցույցներ, զննման համակարգեր, որակի պարգևներ, ֆինանսական գործիքներ)
- Գնահատման վարժություններ, որոնցում ռազամավարությունները ևս գնահատվում են համակցված և համապարփակ չափանիշներով և ազգային/համընդհանուր թիրախներիհամաձայնեցված չափորոշիչներով[29]:
- Ռազմավարությունների կանոնավոր գնահատում/վերանայում, այլ մակարդակներում էական, արդյունավետ և փոխլրացնող ռազամավարությունների պահպանման համար:

3. Գործունեության Առաջնայնությունները

Գործունեության ցանկացած առաջնայնություն կապվում է մի շարք ռազմավարական բաղկացուցիչ կառույցների հետ, որոնք տարորոշվել էին նախորդ բաժնում և դրանցից յուրաքանչյուրը նպաստում է 1.4 բաժնում առաջ քաշված ընդգրկուն նպատակների և սկզբունքների իրականացմանը: Նրանք մշակվել են խորհրդատվության վերաբերյալ արված առաջարկների, նրա արդյունքների և Եվրոպական մակարդակում առկա քաղաքականությունների գնահատման վերլուծության և Հանձնաժողովի սեփական

ռազմավարության վերլուծության հիման վրա: Նրանք ներկայացված էին 6 «առանցքային հաղորդագրություների» ներքո, որոնք կենսական դեր են խաղում Հուշագրում: Այդ հաղորդագրությունները, ՝ փոքր ինչ ձևափոխվելով ու հաշվի առնելով մանրամասն դիտողությունները, հավանության են արժանացել խորհրդատվության կողմից: Առաջնայնությունները ներկայացնող կարգը արտացոլում է իրականացման այն մակարդակը, որին նրանք պատրաստվում են աջակցել. առաջին երեքը սկզբունքորեն վերաբերում են ցկյանս ուսումնառության եվրոպական չափմանը, երկրորդ երեքը պահանջում են դերակատարների հսկայական ներգրավում ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ Եվրոպական մակարդակում համապատասխան աջակցությամբ: Հավելված 1-ում բերվում են հետագա աջակցվող առաջարկները, որոնք կապված են հետազոտության և գնահատման հետ:

3.1. Արժևորել Ուսումնառությունը

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Ուսումնառության մշակույթ ստեղծելը պահանջում է, որ հարցը, թե ինչպես արժևորել ուսումնառությունը ֆոնմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևաչափերով, պետք է բարձրացվի համակցված կերպով[30]: Քաղաքացիներին հնարավորություն տալը՝ հավաքվել և հեռվել դպրոցից, համալսարանից, ուսուցում իրականացնող մարմիններից, աշխատանքից , ազատ ժամանակից և ընտանեկան գործողություններց եկող ուսումնառության վրա, ենթադրում է, որ ուսւոմնառության բոլոր տիպերը կարող են լինել որոշարկված, հասանելի և ճանաչված: Անհրաժեշտ է ուսումնառության արժևորման համապարփակ նոր մոտեցում, որը կկապի ուսումնառության տարբեր համատեքստերը և ձևաչափերը և կհամաբերի ուսւոմնառության անհատական ուղիների հասանելությունը: Խորհրդատվությանն ուղղված նպաստումը շեշտում է այս ոլորտի առաջընթացը, մասնավորապես կապված ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության հետ: Սա էական քայլ կհամարվի ուղղված ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջանին՝ հիմք հանդիսանալով ԵՄ-ի շրջանակներում ազատ տեղաշարժման առկա իրավունքի համար և բացի այդ այն նաև ավելի է կոնկրետացնում քաղաքավիության հայեցակարգը: Սերտ աշխատանք է կատրավել նաև ազգային և եվրոպական մակարդակներում ֆորմալ որակավորումների փոխանցման և փոխադարձ ճանաչման համար: Օրինակ՝ Խորհուրդը և Եվրոպական Խորհրդարանը ընդուն ել են ուսանողների, ուսուցում անցնող մարդկանց, ուսուցիչների և ուսուցանողների շարժունակության վերաբերյալ Առաջարկություններ և Անդամ Պետությունները համաձայնություն են տվել գործունեության ծրագրին[31]: Ի հավելումն մի շարք որոշումներ են ընդունվել և մշակվել, որոնք երաշխավորում են որակավորումների ճանաչումը, որը տարբեր Անդամ Պետություններում կարգավորվող մասնագիտություններին հասանելիություն է ապահովում: Սա, համենայն դեպս, չի բերում համապարփակ շրջանակի, որը աջակցում է որակավորումների և իրավասությունների ամբողջական փոխանցմանը կամ ֆորմալ կրթության և ուսուցման մակարդակների միջև կամ ինստիտուցիոնալ, ճյաուղային և ազգային սահմանների շրջանակում: Կարևոր է այն, որ ուսումնառություն իրականացնողները, գործատուները և սոցիալական գործընկերբերը ներգարվված են ուսումնառությունն արժևորող գործիքների մշակման գործընթացում և որ այդ բոլոր ներգրավվածները՝ ներառյալ անհատ կիրառողները, գտնում են, որ այդ մեթոդաբանությունը և համակրգերը վավեր են, հուսալի և լեգիտիմ: Գործիքները նաև պետք է կիրառվեն

քաղաքացիներին (երիտասարդներին և հասուն մարդկանց) օգնելու թափանցիկ կերպով ներկայացնել իրենց որակավորումները և կարողությունները Եվրոպայի ցանկացած վայրում:

Արժևորել ֆորմալ դիպլոմները և սերտիֆիկատները

- Հանձնաժողովը, Անդամ Պետությունները և սոցիալական գործընկերները համատեղ կուսումնասիրեն կրթության և ուսուցման նվազագույն կամավորական ստանդարտների դերը և բնույթը: Այսպիսի ստանդարտների մշակումը, որը ուղեկցվում է փորձագիտական գնահատականով, կհավելի ազգային կրթության և ուսուցման համակարգերի թափանցիկությունն ու համապարփակությունը՝ ավելի ամուր հիմք ստեղծելով փոխադարձ վստահության և որակավորումների ճանաչման համար[32]:
- Մինչև 2002թ. վերջը Հանձնաժողովը պետք է մշակի, ուղեցույց և բառարան Համայնքի գործիքների վերաբերյալ՝ կապված դիպլոմների և վկայականների թափանցիկության հետ՝ այն գտնելն ու կիրառելը ավելի դյուրին դարձնելու համար: (օրինակ՝ Կրեդիտների Փոխանցման Եվրոպական Համակարգ, դիպլոմի և վկայականների միջուկներ, Եվրոփաս, Եվրոպական CV-ի ձևաչափ, տարբեր ինտերնետային ծառայություններ)[33]:
- Հանձնաժողովը 2001 թ-ի վերջը առաջարկում է մասնագիտական ճանաչման ավելի միասնական, թափանցիկ և ճկուն ռեժիմ կարգավորվող մասնագիտությունների ոլորտում: Անդամ Պետությունները Հանձաժողովի հետ հանագործակցությամբ վստահեցնում են, որ քաղաքացիներին հասանելի է այս որոշումներին և ընդհանուր առմամբ ճանաչման խնդրին վերաբերող թարմացված և էական տեղեկատվությունը: Եվրոպական ցանցերը՝ ներառյալ մասնագիտական ճանաչման մասով ազգային համակրգողներին (ինչպիսիք են NARIC[34] և NRCVG[35]-ն) գլխավոր դերակատարում պետք է ունենան այստեղ:
- Հանձնաժողովը Անդամ Պետությունների և բարձրագույն կրթական հաստատությունների հետ համագործակցության միջոցով ակտիվորեն կաջակցեն բարձրագույն կրթության մասով ընթացող Բոլոնիայի գործընթացներին: Այս գործընթացից ձեռք բերված փորձը կկիրառվի այլ ոլորտներում, ինչպիսիք է մասնագիտական կրթությունը և ուսուցումը, սերտ համագործակցության հասնելու համար:
- Հանձնաժողովը Անդամ Պետությունների և բարձրագույն կրթական հաստատությունների, մասնագիտական ասոցիացիաների և սոցիալական գործընկերների հետ համագործակցության միջոցով կաջակցի Եվրոպական դիպլոմների և վկայականների և դրանց կողմից բավարարվող չափանիշների կամավորական մշակմանն ու իրականացմանը: Սա վերաբերում է և բրաձրագույն կրթության և արդյունաբերության կողմից ստացվող նախաձեռնություններին:

Արժևորել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառություն, փոխանակել փորձը

- Մինչ 2002թ. վերջը Հանձանաժողովը կնախաձեռնի ոչ ֆորմալ ուսումնառության մասով որոշարկման, գնահատման և ճանաչման ոլորտում փորձառնության և լավագույն փորձի համակարգված փոխանակում: Որակավորումների Թափանցիկության Եվրոպական Ֆորումը, որը ղեկավարվում է Հանձաժողովի և Cedefop-ի կողմից, պետք է համակարգի

այս գործընթացը՝ պահպանելով սերտ կապ սոցիալական գործընկերների, որ կառավարական կազմակերպությունների, OECD, Cedefop, Eurydice և Եվրոպական Կրթական Հիմնադրամի հետ:

- Եվրոպական մակարդակում գործունեությանը զուգահեռ Անդամ Պետությունները պետք է ներգրավեն բոլոր էական դերակատարներին՝ ներառյալ ոչ ֆորմալ ուսումնառություն իրականացնողներին, սոցիալական գործընկերներին, ֆորմալ կրթության ներկայացուցիչներին (մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն) և բացառված խմբերի շահեր ներկայացնող ՀԿ-ներին՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արժևորման մեթոդաբանությունը և ստանդարտները մշակելու համար:
- Մինչև 2003թ. վերջը փորձի համակարգված փոխանակման վրա հիմնված՝ Հանձնաժողովը, կստեղծի մեթոդաբանութունների, որոշարկման համակարգերի և ստանդարտների, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գնահատման և ճանաչման բազա/կադաստր: Հանձանաժողովը այս բազան կկիրառի բարձր որակի գնահատման մեթոդոլիագիաներին եվրոպական, ազգային և ճյուղային մակարդակներում աջակցման և հրահրման համար:
- Անդամ Պետությունները կխրախուսվեն ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ավելի ընդգրկուն որոշարկման, գնահատման և ճանաչման իրավական շրջանակը տրամադրելու համար: Անդամ Պետությունները պետք է հաշվի առնեն գնահատման անհատական իրավունքը:
- Անդամ Պետությունները պետք է խրախուսեն Համալսարաններին, կրթության/ուսուցման հաստատություններին և այլ համապատասխան կազմակերպություններին (օրինակ հետազոտական ինստիտուտները) համակարգված ձով իրականցնել միջոցառումներ, որոնք ուղղված են ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գնահատմանն ու ճանաչմանը:

Եվրոպական մակարդակում ուսումնառության բոլոր ձևերի արժևորման աջակցման նոր գործիքներ[36]

- Հանձնաժողովը մինչև 2002թ. վերջը կմշակի «portfolio» համակարգը, որը քաղաքացիներին հնարավորություն կտա համախմբել իրենց որակավորումները ու կարողությունները և ներկայացնել դրանք կրթության և ուսուցման բոլոր փուլերում: Սա կհիմնվի առկա փորձի վրա՝ ներառյալ եվրոպական CV-ին (որը ծառակում է որպես որակավորումների և կարողությունների հակիրճ բնութագիր), որը պահնջվել է Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի կողմից:
- Հանձնաժողովը մինչև 2003թ. համագործակցելով Անդամ Պետությունների հետ որակավորումների հաշվարկման համար կմշակի «մոդուլային» համակարգ, որը թույլ կտա քաղաքացիներին համախմբել տարբեր կառույցների և երկրների կրթությունն և ուսուցումը: Սա հիմնված կլինի Կրեդիտների Փոխանցման Եվրոպական Համակարգի և Եվրոփասի[37] վրա:

3.3. Տեղեկատվություն, կոմնորոշում և խորհրդատվություն

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Խորհրդատվության վերաբերյալ առաջարկությունները հաստատում են տեղեկատվության, կողմնորոշման և խորհրդատվության էական դերը թե ուսումնառության հասանելիության ապահովման և թե պոտենցիալ ուսումնառողներին հրահրելու գործընթացներում:

Կողմնորշման համակարգերի, բոլոր մակարդակներում ցկյանս ուսումնառություն իրականացնողների և աշխատաշուկայի դերակատարների միջև բաց երկխոսությունը այս դերն իրականցնելու նախապայման է հանդիսանում: Կողմնորոշման ծառայությունները պետք է առաջ քաշեն հավասար հնարավորություններ՝ լինելով հասանելի բոլոր քաղաքացիներին, հատյապես նրանց, ովքեր գտնվում են բացառման վտանգի տակ, համակցված, համապարփակ, թափանցիկ, չպարտադրողև բարձր որակի համակարգերի միջոցով ձևափոխված են ըստ նրանց կարիքների: ՏՀՏ-ի վրա հիմնված ծառայությունները, այլ տեղական մակարդակի ծառայությունների (օրինակ՝ գրադարանները) հետ համագործակցությամբ, կարող են ծառայել որպես հասանելի կետեր: Համկարգերը նույնպես պետք է լինեն ճկուն, անհատ ուսումնառողի փոփոխվող կարիքներին հարմարվող՝ միշտ հաշվի առնելով անձնական կատարման կողմնորոշման արժեքը ինչպես նաև աշխատաշուկայի կարիքներն ու լայն համայնքը: Սրա հետ կապված առկա ռեսուրսները պետք է գնահատվեն՝ ուսուցման իրականացման թափանցիկությունն ու համապարփակվածությունն ապահովելու համար, ինչպես նաև պետք է մշակվի ծառայությունների ցանց՝ առկա սահմանները հաղթահարելու համար: Եվրոպական մակարդակում խորհրդատվությունը առաջարկեց համագործակցություն՝ ակս ոլորտում գաղափարների և լավագույն փորձի փոխանակումը բարելավելու համար: Այս ոլորտում իրական ակտիվ քաղաքացիության և շարժունակության առաջ քաշումը ենթադրում է, որ խրհրդատուները ի վիճակի են գործ ունենալ այլ երկրների կրթության, ուսուցման և կողմնորոշման համակարգերի և աշխատաշուկայի ու ծրագրերի հետ:

Տեղեկատվության, կողմնորոշման և խորհրդտավության եվրոպական չափումների հզորացում

- Մինչ 2002թ. Հանձնաժողովը կհիմնի ցկյանս հնարավորությունների ինտերնետ պորտալ, որը տեղեկատվություն է տրամադրում Անդամ Պետություններում և թեկնածու երկրներում ցկյանս ուսումնառության մասին: Հանձնաժողովը կոչ է անում Անդամ Պետություններին ապահովել էական ազգային էլեկտրոնային տվյալների բազայի առակայությունը, որոնք կքրող են միմյնաց հետ կապված լինել պորտալի միջոցով[38]:
- Մինչ 2002թ. վերջը Հանձնաժողովը կիրականացնի Եվրոպական Ուղորդման Ֆորում՝ հրավիրելով էական դերակատարների ներկայացուցիչներին խրախուսելու երկխոսությունը, լավագույն փորձի փոխանակումը և համընդհանուր խնդիրների լուծումների որոշարկումը: Հիմնված լինելով ուղեցույցի ակնարկի վրա, որը տեղի է ունենում Անդամ Պետություններում և թեկնածու երկրներում և OECD-ի հետ համագործակցելով Ֆորումը կմշակի հիմնարար հայեցակարգերի և կողմնորոշման սկզբունքների համընդհանուր ընկալում: Ապա նա պետք է կենտրոնանա այն հատուկ հարցերի վրա ինչպիսիք են սկզբունքների սահմանումը, արդյունքների որակը,

սպառողների շահը/ներգրավումը, գործիքների և փորձի արդյունավետությունը, կողմնորոշմամբ զբաղվողների ուսուցումը և թե ինչպես բավարարել խմբերի բացռման ռիսկի կարիքները:
Ֆորումը նաև կիրականացնի կողմոնորշում իրկանացման որակի արտացոլումը, համընդհանուր ուղենիշների, կողմնորոշման ծառայությունների և արտադրանքների որակի մշակման ակնկալիքով:

- Հանձնաժողովը, մինչ 2003թ. վերջը կուսումնասիրի առկա եվրոպական ցանցերը և կառուցվածքները՝ տեղեկատվության, կողմնորոշման և խորհրդատվության բնագավառում (օրինակ՝ Եվրոկողմնորոշում, EURES, Eurodesk, Fedora, EQUAL, Հետազոտողների Շարժունակության Կենտրոններ) և կրթության ու ուսուցման(ցկյանս ուսումնառության համակցված և միջճյուղային շրջանակի հիմնման ակնկալիքով) և այս ցանցի[39] գործողությունների համար:

3.3. Կրթության վրա ներդնել ժամանակ և փող

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Խորհրդատվությունից առաջ է գալիս կոնսենսուսի կարիք, որ ամբողջական ներդրումների մակարդակը պետք է նշանակալիորեն բարձրացվի, որպեսզի այն արձագանքի գիտելիքահեն հասարակության փոխակերպմանը և որ ուսումնառության վրա ծախսվածը պետք է կարևորվի և զեկուցվի նույն կերպ, ինչպես կապիտալի մյուս ավելի շոշոփելի ձևերի ծախսումները: Հստակորեն, ցկյանս ուսումնառության ներդրման առանցքային ոլորտը կշարունակեն մնալ պետական ծախսերը, որոնք կատարվում են դպրոցի, մասնագիտական, մեծահասակների և բարձրագույն կրթության ոլորտներում, ինչպես նաև այն աճում է նախադպրոցական ոլորտում: Սրանք պետք է հանդիսանանան այն հիմնաքարերը, որոնք պետք է առկա լինեն ցկյանս ուսումնառության ցանկացած ռազմավարությունում: Նեևդրումների ավելացման պատասխանատվությունը նույնպես կիսվում է սոցիալական գործընկերների կողմից. օրինակ՝ կապված այն գործատուների հետ, որոնք տրամադրում են ուսումնառության համապատասխան հասանելիություն: Ուսումնառության վրա 35 ժամի ծախսելը վանկացած աշխատակցի համար պետք է լինի տարեկան նվազագույն ցուցանիշը: Ձեռքբերման մասով փողի արժեքի և որակի ապահովումը այնքան կարևոր է, որքան համապատասխան ռեսուրսների տրամադրումը: Ուսումնառության անհատական ուղենիշներին հնարավության ապահովման կարիքը և ուսումնառության մշակույթի ներդնումը պահանջում է, որ ավելի շատ ռեսուրսներ պետք է ուղղվեն դեպի կողմնորոշում և խորհրդատվություն, ուսումնառության արժևորման նոր մոտեցումներ և տրաբեր ոլորտներում ուսումնառության առկայությունը համապատասխան միրոցներով (օրինակ՝ երեխաների խնամքի համար): Նմանապես ոչ ֆորմալ ուսումնառության հետ կապված պահանջվել են ավելի շատ ռեսուրսներ, հատկապես, մեծահասակների և համայնքային ուսումնառության իրականացման համար: Արձագանքողները նշում են ռեսուրսների հավաքագրման մասով առաջնայնությունը տրամադրել երեխաների նախադպրոցական կրթությանը (հետագա անհավասարությունները կրճատելու համար և հետագա ուսումնառության մասով ամուր հիմք դնելու համար), ուսուցիչներին, ուսուցանողներին և

ուսումնառության այլ համաբերողներին (նրանց պատրաստելու իրենց դերերը կատարելու համար) և ավագ քաղաքացիներին՝ ներառյալ ծեր բանվորները(հնարավորություն տալով նրանց ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերել հասարակությունում և այլ աշխատաշուկայում՝ ներառյալ այն դերը, որ նրանք կարող են ունենալ մինչսերնդային[40] ուսումնառության մեջ): Անկասկած չկա ոչ մի վերևից ներքև լուծում, թե ինչպես իրականացնել հիմնարար բարենորոգումներ, մինչ հաշվի են առնվում ներդնումների ամբողջական մակարդակի բարձրացման կարիքը և միևնույն ժամանակ կրճատում է անհավասարությունները ռեսուրսների հավաքագրման մասով: Կոշտ որոշումներ պետք է կայացվեն:

Բարձրացնել ներդրումների մակարդակը և դրանք դարձնել ավելի թափանցիկ

- Հանձնաժողովը կոչ է անում
  - Եվրոպական Ներդրումների Բանկին մարդկային կապիտալի զարգացման առաջխաղացմանն ուղղված իր քաղաքականության շրջանակում ձգտել աջակցել ցկյանս ուսումնառության իրականացումը ինչպես նկարագրված է այս Ձեկույցում, օրինակ՝ ուսուցիչների ուսուցանման համար ենթակառուցվածքների ֆինանսավորման միջոցով, ձեռնարկությունների[41] կողմից մշակված տեղական ուսումնառության կենտրոնների, մուլտիմեդիա ուսումնառության էլեկտրոնային, համատեքստային և ուսուցման ծրագրեր
  - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին և Եվրոպական Ներդրումների Բանկին ներդնել ցկյանս ուսումնառության զրագացման մեջ, օրինակ՝ ՓՄՁ-ները և ենթակառուցվածքերը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թեկնածու երկրներում:
  - Եվրոպական ներդրումների բանկին ուսումնասիրել, թե ինչպես լավագույնս կարող կիրառվել իրգործիքները՝ առաջ քաշել ռիսկային կապիտալ ֆոնդերի հրատապությունը, որոնք ուղվված են մարդկային կապիտալի աջակցմանը, օրինակ՝ ՓՄՁ-ներիի համար ուսումնառությունը դարձնել հասանելի:
- Անդամ Պետությունները պետք է դնեն ազգային թիրախ՝ բարձրացնել մարդկային ռեսուրսների վրա կատարվող ներդրումների չափը Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի եզրակացությունների և Զբաղվածության Ուղեցույցների [42] հետ մեկտեղ: Այսպիսի թիրախային ձևաչափերը պետք ի իրականան թափանցիկ կերպով, կապված այն բանի հետ, թե ինչպես պետք է հավաքագրվեն ռեսուրսները: Պետք է նաև հաշվի առնվի կառավարության, գործատուների, անհատների և այլ դերակատարների համապատասխան դերերը: Ի հավելումն՝ Անդամ Պետությունները պետք է թիրախ համարեն հետագա կրթության և ուսուցման բնագավառում ընդլայնել մասնակցությունը, որ նրանք ակնկալում են ձեռք բերել գենդերային, տարիքային խմբերի, կրթական նորարարությունների և թիրախային խմբերի կողմից:
- Անդամ պետությունները կոչ են անում մշակել հետագայում Եվրոպական Սոցիալական Հիմնադրամից օգուտ քաղելու խնդիրները, որը ցկյնս ուսումնառության մասով գրեթե միակ Համայնքային գործիքն է, ինչպես նաև կոչ է անում հավասար Համայնքային

նախաձեռնությանը աջակցել ցկյանս ուսումնառության իրականցմանը, մասնավորպես տեղական ուսումնառության համագործակցության և կենտրոնների զարգացման միջոցով, և աշխատավայրում աջակցել ուսումնառության հնարավորություններին, հասանելի դարձնել հիմնարար հմտությունները (ներառյալ երկրորդ հնարավորթության իրկանացումը) և ուսուցիչների, ուսումնառողների և ուսումնառության այլ համաբերողների[43] ուսուցումը:

- Հնաձանաժողովը պետք է մշակի չափորոշիչներ և այլ գործիքներ Եվրոպական Սոցիալական Հիմնադրամի (ԵՍՀ) ծրագրերի ազդեցությունը չափելու համար և պետք է աջակցի ցկյնս ուսումնառության գործողություններիի իրականցմանը (ԵՍՀ -ի կողմից ֆինանսվորվող) որպես Հիմնադրամի կիսամյակային ակնարկ, որը պետք է իրականանա մինչև 2003թ. վերջը:
- Սոցիալական գործընկերները հրավիրված են բանակցել և իրականացնել համաձայնագրեր բոլոր համապատասխան մակարդակներում աշխատանքի կազմակերպումը[44] դարձնելով ավելի ժամանակակից՝ ցկյանս ուսումնառության վրա ներդրումների մեծացման ակնկալիքով և ավելի շատ ժամանակ տրամադրել ուսումնառության վրա: Օրինակ՝ նրանք պետք է աշխատեն ուսումնառության գործողությունների ճանաչման ուղղությամբ՝ ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը և ներգրավել սա մարդկային ռեսուրսների քաղաքականությունների և փորձառնությունների բոլոր կաղմերի վրա ձեռնարկությունների մակարդակում:

Խթանել և իրականացնել ներդրումներ

- Հանձնաժողովը պետք է գնահատի անհատական ֆինանսավորման սխեմայի տարբեր մոդելներ (օրինակ՝ անհատական ուսումնառության հաշիվները)՝ ներդրումների վրա իրենց ազդեցությունը գնահատելու, ուսումնառության և ուսումնառության ձեռքբերումներին մասնակցելու համար: Այս գնահատականը ամբողջությամբ կօգտվի այս ոլորտում արդեն իսկ OECD-ի կողմից կատարված աշխատանքից և գնահատման զեկույցը կներկայացվի մինչև 2002թ. վերջը:
- Հանձնաժողովը կառաջարկի, որ ցկյանս ուսումնառության վրա կատարված ներդրումների՝ շահեր, ծախսերը և ետ եկող գումարները կհիմնավորվեն առակ հետազոտության մեջ, որն էլ աջակցվում է Հետազոտական Շրջանակի 6-րդ Ծրագրի[45] կողմից:
- Հանձնաժողովը Անդամ պետությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա կտրամադրի ուսումնառության համար հասանելի ֆինանասական խթանումների պատկերը, որը ֆինանսավորվում է անհատների և կազմակերպությունների կողմից՝ լավագույն փորձի որոշարկման և ընդունման ակնկալիքով:

Ապահովել ներդնումների ձեռքբերումների և դրանցից ետ եկող գումարների բարձր որակը

- Մինչև 2003թ. վերջը Հանձնաժողովը, Անդամ պետությունների հետ համագործակցության

միջոցով, կմշակի ցկյանս ուսումնառության[46] որկի բնագավառների ուղեցույցները և չափորոշիչները և կաջակցի Անդամ Պետություններում լավագույն փորձի և փորձագիտական գնահատականի փոխանակման քաղաքականության մշակմանը:

3.4. Միմյանց մոտեցնել ուսումնառողներին և ուսումնառության հնրավորությունները

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Խորհրդատվության առաջարկությունները ընդգծում են տեղական մակարդակում բաց և ճկուն կրթության և ուսուցման իրականացման ադեկվատ մակարդակների կարևորությունը՝ մոտեցնելով միմյանց ուսումնառությունը և ուսումնառողներին և տեղական կողմնորոշման ծառայությունների դերը սրան միջնորդելու համար: Այստեղ առաջ է գալիս ոչ ֆորմալ ուսումնառության անհրաժեշտությունը աշխատավայրում և սոցիալական շրջապատում՝ արտացոլելով ցկյանս ուսումնառության նպատակները ակտից քաղաքացիության, անձնական կատարման և աշխատանքի տեղավորվելու կարողության և սոցիալական բացառման միջև: Շատ հաշվետվություններ են արտացոլել ուսումնառության (ոչ ֆորմալ և ինֆորմալ) հնարավորությունների արժեքը, որը իրականցվում է մեծահասակների կրթության կամ կամավորական հատվածի, ներառյալ ՀԿ-ները և տեղական համայնքային կազմակերպությունները: Ոչ ֆորմալ կրթությունը արտացոլվում է երիտասարդության շրջանակներում, օիրնակ՝ ավելացնել հասարակությունում երիտասարդների մասնակցության հնարավորությունները ւ ձեռք բերել հանդուրժող և ժողովրդավարական արժեքներ:

Եվրոպայով մեկ ուսումնառության մշակույթի առաջ քաշման համար անհրժեշտ է զարգացնել ուսումնառության համայնքները, քաղաքաները և տարածաշրջանները և հիմնել տեղական բազմագործառույթ ուսումնառության կենտրոններ:[47] Խորհրդատվության վերաբերյալ առաջարկությունները ևս կենտրոնացված են նորարարական ուսումնառողակենտրոն ուսումնառության, ուսուցման մեթոդների և ՏՀՏ պոտենցիալի վրա և համապատասխան աջակցությամբ օգնում են ուսումնառություն ու ուսումնառողին միացնել միմյանց: Այս փաստաթղթի նպատակի համար ՏՀՏ հարցերը բարձրացված են 3.6 կետում:

Խրախուսել և աջակցել ուսումնառության համայնքներին, քաղաքաներին և տարածաշրջաններին և հիմնել ըեղական ուսումնառության կենտրոններ

- <u>Անդամ պետություններին</u> կոչ են անում կիրառել դպրոցների, մեծահասակների ու բարձրագույն կրթության հասատատություններին և այլ հանրային համաբերողներին ինչպիսիք են գրադարանները և ցկայնս ուսումնառության բազմաֆունկցիոնալ կենտրոնները[48]:
- <u>Երիտասարդական կազմակերպությունները</u> պետք է կանոնավոր կերպով տեսանելի դարձնեն և հանրությանը ներկայացնեն ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ձեռքբերումները, որնք իրենց գործողությունների արդյունք են հանդիսանում:

- Հետագայում Անդամ Պետություններին կոչ է արվում զարգացնել Եվրոպական Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ERDF) և ESF-ի հետ համագործակցությունը՝ ցկյանս ուսումնառության իրականացմանը աջակցելու համար՝ որպես տեղական և տարածաշրջանային զարգացման ծրագրերի բաղկացուցիչ մաս: Նրանց կոչ էր արվում նաև աշխատակիցների, մասնավորապես նրանք, ովքեր աշխատում են ՓՄՁ-ներում նպաստել ՏՀՏ հմտությունների զարգացմանը:
- Հանձնաժողովը կոչ է անում Շրջանների Կոմիտեին զարգացնել՝ հավանաբար տեղական և տարածաշրջանային մակարդակում եվրոպական և ազգային ասոցիացիաների ներգրավմամբ
    - Եվրոպական երկկողմանի համաձայնագրերի միջոցով սերտ համագործակցություն ապահովել տեղական և տարածաշրջանային ուսումնառության կենտրոնների միջև և նաև զարգացնել ՏՀՏ կիրառությունը՝ բոլոր ձևաչափերի ուսումնառությունների միջև կապի ապահովման և փորձի փոխանակության ակնկալիքով:
    - Հանձանաժողովի հետ միասին տեղական և տարածաշրջանային մակարդակում կազմակերպել արշավ՝ ցկյանս ուսումնառության ամենաարդյունավետ մոտեցումների առաջ քաշման և հանրությանը տեղեկացման նպատակով:
- Իր ծրագրերի միջոցով Հանձնաժողովը կաջակցի լավ զարգացած ցկյանս ուսումնառության ռազմավարության ծրագիր ունեցող տարածաշրջանների և քաղաքների միջև ստեղծել ցանց՝ լավագույն փորձի և փորձառնության փոխանակումը իրականացնելու համար:

Աշխատավայրում էական է ուսումնառության ակտիվորեն զարգացման ուսումանռության առաջ քաշումը, իսկ ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների համար էական է ցկանս ուբսումնառության կազմակերպություն դառնալու խնդիրը: Սոցիալական գործընկերները առանցքային դեր են խաղում այս տեսլականը իրականություն դարձնելու գործում, ինչպես նաև ձեռնարկությունների մակարդակում բոլոր աշխատակիցների համար ուսումնառության հավասար հնարավորությունների և հասանելիության ապահովման գործում՝ հաշվի առնելով աշխատանքի, ընտանեկան կյանքի և այլ հոգատարական պարտականությունների ճանաչման կարիքը: Մասնավորապես կարևոր է խորանալ ՓՄՁ-ների ուսումնառական կարիքների մեջ (որտեղ ուսումնառությունը հիմնականում կատարվում է որ ֆորմալ և ինֆորմալ համատեքստով)[49]: Ուսումնառաության իրականացումը պետք է լինի ճկուն, բարձր որակի և համապատասխնեցված անհատական պահանջներին: Ուսումնառություն իրականացնողները, օրինակ՝ բարձրգույն կրթության հաստատությունները, պետք է առաջարկեն այնպիսի դասընթացներ, որոնք ձևափոխված են իրենց հատուկ կարիքներին համապատասխան: ՓՄՁ-ները նույնպես իրենց հերթին պետք է բացահայտեն, թե ինչպես համաբերեն ուսումնառության հասանելիությունը (օրինակ՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության ժամանակ՝ ուսումնառության ցանցերի և իրավասությունների կիսման և կողմնորշման ծառայությունների հետ համագործակցության միջոցով): Հանձանաժողովի զեկույցը «Օգնել SME-ներին դառնալ Թվային» այս ենթատեքստում նպաստում է ՓՄՁ-ների համար ՏՀՏ հմտությունների իրականացմանը[50]:

Աշխատավայրում ուսումնառության խրախոըսոըմ և աջակցություն՝ ներառյալ SME-ներին:

- Բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերներին կոչ է արվում համաձայնել, որ յուրքանչյուր աշխատակից իր կարողությունների գնահատման հիմնա վրա պետք է ունենան անհատական կարողության զարգացման պլան՝ համապատասխան ձեռնարկատիրությունների մակարդակում ընդհանուր կարողությունների մշակման պլանների: Այսպիսի կաղապարները պետք է ամբողջությամբ հաշվի առնի ՓՄՁ-ների առանձնակի կարիքները ու իրավիճակը և պետք է տրամադրի փորձագիտական խորհրդատվություն, թե ինչպես գնահատել ուսումնառության կարիքներն ու կարողությունները: Սոցիալական գործընկերները նաև պետք է օգնեն բարձրացնել իրազեկությունը ուսումնառության կարևրության մասին և խրախուսել ու ուսուցանել աշխատակիցներին ու ղեկավար աշխատակազմին գործել որպես ուսումնառության համաբերողներ և որպես այլոց կրթողներ:
- Հանձնաժողովը խրախուսում է եվրոպական սոցիալակն գործընկերներին, սոցիալական երկխոսուայն միջոցով, ավարտին հասցնել համընդհանուր նպատակներ պարունակող շրջանակը, որպեսզի բոլոր մակարդակներում և հատկապես ձեռնարկությունների մակարդակում առաջ քաշվի ցկյանս ուսումնառությունը: Հանձնաժողովը կոչ է անում սոցիալական գործընկերներինառաջ քաշել նման շրջանակ ազգային մակարդակում՝ նրանց համապատսխան կազմակերպությունների միջոցով՝ համաձայն ազագային փորձառնության:
- Հանձնաժողովը մինչ 2003թ. սկիզբը զարկ կտա ցկյանս ուսումնառության մեջ ներդրում կատարած ձեռնարկությունների պարգևատրմանը՝ այս ոլորտում լավագույն փորձի պարգևատրման և հանրայնացման նպատակով[51]:

3.5. Հիմնարար Հմտություններ

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Եվրոպական Խորհուրդը Լիսաբոնում և Սթոքհոլմում ընգծեց հիմնարար հմտությունների կարևորության հարցը՝ ադեկվատ կրթության և ցկյանս ուսումնառության հնարավորությունների միջոցով: Հիմնարար հմտությունները ներառում են կարդալու, գրելու և մաթեմաթիկայի հմտությունները, ինչպես նաև սովորել սովորեցնելու համար և Լիսաբնում առաջ քաշված այնպիսի նոր հմտություններ, ինչպիսիք են ՏՀՏ հմտությունները, օտար լեզուները, տեխնոլոգիական մշակույթը, ձեռնհերեցությունը և սոցիալական հմտությունները: Խորհրդատվության վերաբերյալ արված առաջարկությունները ընդգծեցին հիմնարար հմտությունների կարևորությունը՝ թույլ տալով մարդկանց ներգրավել հետագա ուսումնառության մեջ՝ որպես անձնական կատարման, ակտիվ քաղաքացիության և աշխատանքի տեղավորվելու ունակության հիմք՝ մասնավորապես հաշվի առնելով գիտելիքահեն հասարակության պահանջները: Ցկյանս ուսումնառության հիմքերը պետք է ապահովեն Կառավուրթյան կողմից՝ դպրոցում պարտադիր ուսումնառելու, բայց նաև այն մեծահասակները, ովքեր ավարտել են դպրոցը գրագիտության, որակական

մտածելակերպի և այլ հիմնարար հմտությունների շնորհիվ խրախուսվում են մասնակցություն ցուցաբերել փոխհատուցվող ուսումնառության մեջ:

Որոշարկել, թե ինչից պետք է բաղկացած լինի հիմնարար հմտությունների փաթեթը

- Հանձնաժողովը պետք է հրավիրի «ենթախմբեր», որոնք տեղծվել են Կրթության և ուսուցման համակարգերի կոնկրետ նպատակների զեկույցի համաձայն, որպեսզի կրթության և ուսուցման համակարգերից դուրս վեր բարձրացնեն հիմնարար հմտությունների իրականացման խնդիրը, ինչպես նաև մեծահասակների կողմից ձեռք բերված հիմնարար հմտությունների ուսումնառության խթանման, հիմնարար հմտությունների, մասնավորապես սոցիալական, անհատական, ՏՀՏ և այլ գիտական հմտությունների իրականցման հարցերը՝ առանց դրանց ներբեռնման պլանի[52]:

Հիմնարար հմտությունները դարձնել հասանելի բոլորի և մասնավորպես նրանց համար, ովքեր դպրոցում ունեն ավելի քիչ հնարավորություններ, դպրոցը վաղ տարիքում լքողների և մեծահասակ ուսումնառողների համար[53]

- Հիմնարար իրավունքների Հրովարտակ ճանաչում է կրթության իրավունքը՝ ներառյալ անվճար պարտադիր կրթությունը և մասնագիտական և շարունակական ուսուցման հասանելիությունը[54]: Այս իրավունքը ավելի հստակ դարձնելու համար Անդամ Պետությունները պետք է հաշվի առնեն պարտադիր կրթության իրավունքը՝ այնպես, որ այն իր մեջ ներառի բոլոր քաղքացիների համար (անկախ տարիքից) հիմնարար կրթությունների անվճար հասանելիությունը:
- Անդամ Պետությունները պետք է ապահովեն այն, որ երիտասարդները ձեռք բերեն հիմնարար թվային գրագիտություն որպես պարտադիր ուսուցման մաս և որ նրանք պետք է նաև տարածեն այդ թվային գրագիտության նախաձեռնությունները բացառման վտանգի առաջ կանգնած քաղաքացիների վրա[55]: Անդամ Պետությունները հնարավորություն պետք է տան գործազուրկներին, որպեսզի նրանք ձեռք բերեն ՏՀՏ հիմնարար հմտությունները հաստատող ճանաչված վկայական:
- Ցոցիալական գործընկերներին կոչ է արվում ավարտին հսցնել ուսումնառության հնարավորությունների առաջ քաշման մասին համաձայնագրերը, մասնավորապես ցածր մակարդակի աշխատողների համար՝ ամենի մի աշխատողին հնարավորություն տալով մինչ 2033թ[56] հասնել տեղեկատվական հասարակության գրագիտության:
- Հանձնաժողովը կոչ է անում ՅԿ-ներին եվրոպական մակարդակում որոշարկել հիմնարար հմտությունների ձեռք բերման կամ խանգարման և քաղաքացիների, հատկապես բացառման վտանգի առաջ կանգնածների, ցկյնս ուսումնառության գործընթացներում մասնակցություն ցուցաբերելու գործոնները: Սա պետք է հիմք ծառայի համապատասխան մակարդակում քաղաքականության ադեկվատ արձագանքների համար՝ ներառյալ ճկուն ուսումնառությունը, որը կենտրոնացած է ուսումնառողակենտրոն գործունեության վրա, ինչպես նաև անշահավետ հարևանության

և խմբերի մարդկանց համար համայնքային կրթական ծրագրերի աջակցության, երեխաների և խնամք պահանջող այլ մարդկանց համար հոգատարական ծառայությունների իրականացման համար:

3.6. Նորարարական մանկավարժություն

Այս առաջարկները համալրում կամ իրենց մեջ ներառում են «ուսումնառության պահանջարկի ընկալումը», «համագործակցային աշխատանքը» և «կատարելության ձգտումը»:

Խորհրդատվական հետադարձ կապը շեշտադրում է «գիտելիքից» «կարողություն» անցումը և դասավանդումից ուսումնառությունը՝ ուսանողին տեղադրելով այս երևույթների կենտրոնում: Նման անցումը ակնարկում է, որ ամենավաղ շրջանում մարդիկ «սովորում են սովորել»: Ուսանողները պետք է հնարավության սահմաններում ձգտեն ձեռք բերել և զարգացնել գիտելիքներ և կարողություններ: Ուսումնառության տարբեր մեթոդներ են կիրառվում՝ կախված ուսանողի իրավիճակից, ուսուցման գործընթացը վարողից և վայրից (օր. համայնքային կենտրոններ, աշխատավայր, տուն): Աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը, ծրագրերի վրա հիմնված ուսուցումը և «ուսուցման ցիկլում» կազմակերպված ուսումնառությունը օգտակար մոտեցումներ են: Դասավանդման և ուսումնառության նոր մեթոդները մարտահրավերներ են ուսուցիչների, դասավանդողների և դասավանդումը վարող այլ մասնագետների դերերին և պարտականություններին: Այդուհանդերձ, խիստ անհրաժեշտ է նրանց համար մշակել վերապատրաստման այնպիսի դասընթացներ, որոնք կներառեն նաև բազմամշակութային կարողություններ և կապահովեն մասնագետների պատրաստվածությունը և մոտիվացիան մարտահրավերները հաղթահարելու համար, ինչպես նաև կնպաստեն հանդուրժողականության և ժողովրդավարական արժեքների խթանմանը: Այս գործընթացը իր մեջ կներառի նաև ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության մոտեցումների բարեփոխումներ և կատարելագործում: Դպրոցների, մեծահասակների և կամավորական կարգմակերպությունների, էթնիկ խմբերի կենտրոնների, համալսարանների և կազմակերպությունների միջև փորձի փոխանակումը խորը պատկերացում կստեղծի այս ոլորտում ուսումնառության կարիքների վերաբերյալ: ԲՈՒՀ-երը և հետազոտական հաստատություններն օրինակ, պետք է ներկայացնեն կամ բարձրացնեն Ողջ կյանքի ընթացքում ուսուցման վերաբերյալ հետազոտության ծավալները: Բոլոր ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ՏՀՏ վրա հիմնված ուսումնառությունն առաջարկում է ուսումնառության գործընթացի շուրջ նոր մտածելակերպ ձևավորելու և գործընթացը վերաձևակրեպելու մեծ ներուժ, սակայն միևնույն ժամանակ գիտակցելով նոր տեխնոլոգիաների կողմից ստեղծվող «թվային բաժանումը»: Էլեկտրոնային ուսումնառության նախաձեռնությունը և էլեկտրոնային ուսումնառության գործողությունների պլանը հասցեագրում է այս ոլորտում առկա մի շարք կարևոր խնդիրներ՝ համակարգելու Անդամ Պետությունների ջանքերը համապատասխանեցնել կրթության և ուսուցման համակարգերը տեղեկատվական հասարակությանը[57]: Շատ հաշվետվություններ պնդում են, որ ՏՀՏ ուսումնառությունը պետք է համատեղվի ուսումնառության այլ, ավելի «սոցիալական» մոդելների (օր. ուսումնառության խմբեր, ընտանեկան ուսումնառություն, դասավանդում և համագործակցային ուսումնառություն աշխատանքի վայրում) և անհատական և տեխնիկական աջակցության

պարբերական ծառայությունների հետ: Արագ զարգացող շուկայի պայմաններում ուսումնառության նյութի որակը և համապատասխանությունը, ծառայությունները և ուսումնառության գործընթացները կարևոր են, հատկապես սպառողների պաշտպանվածության, մոտիվացիայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից[58]:

Դասավանդման և ուսումնառության նոր դերեր ուսուցիչների, դասավանդողների և ուսուցումը համաբերողների համար

- Հանձնախումբը կաջակցի Սոկրատես և Լեոնարդո Դա Վինչի ծրագրերի միջոցով ուսուցիչների և դասավանդողների վերապատրաստման ցանցի ստեղծմանը: Հիմնվելով արդեն գոյություն ունեցող ցանցերի վար, օր. Cedefop, այն նպատակ կունենա վերլուծել և փոխանակել նորարարական փորձը՝ ֆորմալ և ոչ ֆորմալ համատեքստերում, միևնույն ժամանակ ստեղծելով պայմաններ Համայնքի ներսում գիտելիքների փոխանակման համար: Այն նաև ներդրում կունենա ուսուցիչների և դասավանդողների կարողությունների և որակավորումների հոման համընդհանուր շրջանակի ստեղծմանը և կարծագանքի ՏՀՏ վրա հիմնված ուսումնառության մարտահրավերներին: Անդամ պետությունները, տեղական և տարածքային պետական մարմինները, ուսումնառություն տրամադրողները, ուսուցիչների ներկայացուցիչները և ՀԿ-ները, ինչպես նաև նրանք, ովքեր ակտիվ են երիտասարդների արտադպրոցական ուսումնառության ոլորտում պետք է իրենց ներդրում ունենան այս գործընթացում՝ ուսումնառության գործընթացը հասանելի դարձնելով այլ Անդամ և ոչ Անդամ Պետությունները դասավանդողների համար: Մասնակի ուշադրություն պետք է դարձնել դասավանդման այնպիսի բնագավառներին, ինչպիսիք են մեծահասակների ուսուցումը, որտեղ ուսուցիչների ֆորմալ դասավանդումը դեռևս պարտադիր պայման չէ բոլոր Անդամ երկրներում և որտեղ դասավանդման որակի բարձրացումն այդուհանդերձ հատկապես առաջնային է:
- Ելնելով ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը վերագրվող կարևորությունից, անհրաժեշտ է նպաստել ուսուցումը վարողների դերի ամրապնդմանը: Սոցիալական գործընկերները, ՀԿ-ները (օր. երիտասարդական կազմակերպությունները) և այլ կառույցներ պետք է Հանձնախմբի և Անդամ երկրների հետ համագործակցությամբ նախաձեռնեն այս ոլորտում փորձի փոխանակման պարբերական միջոցառումներ:
- Հանձնախումբը կիրականացնի հետազոտություն և փորձաքննություն այն մասին թե ինչպես ենք մենք սովորում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում, և թե ինչպես ՏՀՏ-ն կարող է ինտեգրվել այս ուսումնառության գործընթացներում, աջակցվել Հետազոտությունների շրջանակի 6-րդ ծրագրով՝ Լեոնարդո դա Վինչի, Սոկրատես և Երիտասարդների ծրագրերի, էլեկտրոնային ուսումնառության փորձնական ծրագրի և տեղեկատվական տեղնոլոգիաների միջոցով:
- Ծրագրի[59] և EQUAL համայնքային նախաձեռնության միջոցով: Այս գործընթացը պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ և արդյունավոր մանկավարժական մոտեցումների զարգացմանը ուսանողների տարբեր խմբերի համար, ներառյալ նաև փոքրաքանակ/ոչ ավանդական խմբեր[60] : Հանձնախումբը մինչև 2003թ., Անդամ Պետությունները, սոցիալական գործընկերների և միջազգային ՀԿ-ների

հետ համագործակցությամբ պետք է մշակի Եվրոպական որակի չափանիշներ, որոնք ուղղված կլինեն ֆորմալ ուսումնառությունից և կրթությունից դուրս մնացած կազմակերպություններին, և կարող են օգտագործվել կամավորական սկզբունքով: Եվրոպական պիտակը կտրամադրվի այն կազմակերպություններին, որոնք կհամապատասխանեն այս չափանիշներին:

ՏՀՏ աջակցում և նպաստում է ուսուցմանը ողջ կյանքի ընթացքում

- Հանձնախումբը, Անդամ Պետությունների հետ համագործակցությամբ, կուսումնասիրի ազգային մակարդակում առկա մոտեցումները՝ ICT վրա հիմնված ուսումնառության և դասավանդման համար որակի կնիքներ մշակելու մասնակիորեն ուսումնառության էլեկտրոնային բազա հեռանկարային մոտեցմամբ՝ հնարավորինս զարգացնել դրանք Եվրոպական մակարդակի, համապատասխանություն և սպառողների պաշտպանվածություն ապահովելու համար:
- Հանձնախումբը կշարունակի աջակցել Սոկրատես և Լեոնարդո դա Վինչի ծրագրերի ներքո իրականացվող նախագծերը և էլեկտրոնային ուսումնառության նախաձեռնությունները, որպեսզի զարգացնի ՏՀՏ վրա հիմնված ուսումնառություն՝ Եվրոպական չափանիշների, օր. հիմնադրելով միջազգային «վիրտուալ ուսումնական ցիկլեր»:

4. Օրակարգի առաջ քաշում

4.1. Ցկյանս ուսումնառության շրջանակը

Անդամ Պետություններն ամբողջությամբ պատասխանատվություն են կրում իրենց սեփական կրթական և ուսուցման համակարգերի բովանդակության և կազմակերպման համար[61]: ԵՄ-ի կողմից օրենքները և կանոնակարգերը համապատասխանացնելու կարիք չկա: Ինչևէ, միևնույն ժամանակ, գոյություն ունեն որոշակի քաղաքական գործառույթներ կապված ողջ կյանքում ուսումնառության հետ, որոնք իրականացվում են Եվրոպական մակարդակով: Ի լրումն մասնագիտական դասավանդման քաղաքականության[62] իրականացմանը, Համաձայնագիրը Համայնքի համար առանցքային դեր ունի այս ոլորտում կրթության որակը բարելավելու ուղղությամբ՝ Եվրոպական հանձնաժողովի միջոցով: Եվրոպական միությունը կոնկրետ դերակատարություն ունի կապված՝ քաղաքացիների ազատ տեղափոխվելու (թե՛ սովորելու, թե՛ աշխատելու նպատակով), Եվրոպական աշխատանքի շուկայի ձևավորման մեջ[63] և աշխատանքի և սոցիալական ներգրավվածության քաղաքականությունների համակարգման հարցում: Միջազգային կրթությունը, ուսուցումը և աշխատանքը որոշ քաղաքացիների համար արդեն իրականություն է: Սակայն չնայած այդ փաստին, դեռևս առկա են բազում խոչընդոտներ հարևան երկրներում սովորելու, աշխատելու և ապրելու ցանկություն ունեցողների համար:

Այդուհանդերձ, բավական մեծ դեր է հատկացվում Եվրամիությանը և համագործակցությամբ նաև Անդամ Պետությունների ողջ Համայնքում կրթություն ողջ կյանքի ընթացքում գաղափարը աջակցելու և դրա իրականացումը խթանելու համար: Միևնույն

ժամանակ, քաղաքական միջամտությունները ևս պետք է համապատասխանեցվեն տեղական և ազգային պայմաններին, ելնելով ողջ Եվրոպայի տարածքում առկա ամենատարբեր կրթական, ուսումնական համակարգերը և աշխատանքի շուկան: Ամենամեծ մարտահրավերն այս դեպքում կայանում է նրանում, որ Անդամ Պետությունները ազատ լինեն մշակելու իրենց սեփական համապատասխան և համապարփակ ռազմավարություններ, և մշակել և կառավարել սեփական համակարգեր՝ շարժվելով ընդհանուր առմամբ միևնույն ընդհանուր ուղղությամբ: Սա անհրաժեշտ է իրականացնել համապատասխան, համակարգված և տնտեսական ճանապարհով: Այնտեղ, որտեղ Եվրամիությունը չունի իրավական կարողություն և որտեղ Համաձայնագրի նպատակները արտացոլված չեն Համաձայնագրի վրա հիմնված գործընթացներում, կկիրառվեն հետևյալ մեթոդները (որոնց մեջ մտնում է նաև համակարգման բաց մեթոդը):

- Ընդհանուր խնդիրների, առաջնահերթությունների և գաղափարների բացահայտում՝ գիտելիքի փոխանակման, հաջողված փորձի և փորձառության փոխանակման, ինչպես նաև հավասարը հավասարին քննադատման միջոցով, որը հնարավորություն կտա բոլոր կամ որոշակի Անդամ պետություններում քայլեր ձեռնարկելու
  Եվրոպական գործիքներով կամ գործընթացներով:
- Բարձրացնելով քաղաքականությունների և համակարգերի թափանցիկությունը քաղաքացիներին հնարավորություն տալով և հասանելի դարձնելով իրենց ընտրությամբ հաստատությունները և ծառայությունները:
- Ապահովելով փոխլրացում և համաձայնություն տարբեր գործընթացների, ռազմավարությունների և պլանների միջև՝ միտված ողջ կյանքի ընթացքում ուսումնառության իրականացմանը:
- Մշակելով համաձայնություն Անդամ Պետությունները քաղաքականությունների միջև՝ ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ոլորտում:

<u>Մինչև 2003թ. վերջև Հանձնախումբը կմշակի հաջողված փորձի, տեղեկատվության և փորձի վերաբերյալ տեղեկատվական բազա, կապված բոլոր մակարդակներում ուղջ կյանքի ընթացքում ուսուցման ոլորտների վերաբերյալ՝</u> նպատակ ունենալով նպաստել ուղջ կյանքի ընթացքում ուսուցման իրականացմանը: Դեպքերը կընտրվեն համաձայն նախապես մշակված հստակ չափանիշների և կազմված կլինեն թեմատիկ սկզբունքով և դերակատարներով: Տվյալների բազան իր մեջ կներառի ոչ միայն դեպքեր Համայնքային «գործիքներից» (կրթություն, ուսուցում և երիտասարդական ծրագրեր, ESF, ERDF և համայնքային նախաձեռնություններ) այլ նաև ազգային, տարածքային, տեղական և սեկտորային մակարդակներից, ոչ Անդամ Պետություններից, միջազգային կազմակերպություններից, սոցիալական գործընկերներից և քաղաքացիական հասարակությունից: Այս տվյալների բազան կառուցված կլինի առկա նախաձեռնությունների հիման վրա, հիմնված կլինի բոլոր դերակատարների հետ երկխոսությունների հիման վրա և հասանելի կլինի ինտերնետում՝ միշտ թարմ տեղեկատվությամբ և առկա խնդիրներին համապատասխան[64]

4.2. Եվրոպական մակարդակում հիմնվել ձեռքբերումների վրա

Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության իրականացումը, ներառյալ այն առաջնահերթ աշխատանքները, որ բացահայտվել են 3-րդ մասում, կյանքի կբերվեն գոյություն ունեցող

գործընթացների, գործիքների և ծրագրերի միջոցով[65]:

- Կրթության և ուսուցման համակարգերի վերաբերյալ Կոնկրետ նպատակների հերթական հաշվետվությունն աշխատանքային ծրագիրը կլինի այն հիմնական միջոցներից մեկը, որը կնպաստի Անդամ Պետությունների միջև համագործակցության հզորացմանը և հաջողված փորձի փոխանակմանը՝ ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ոլորտում:
- Եվրոպական աշխատանքի ռազմավարության հետագա հանդիպումների ընթացքում նկատի կառնվեն աշխատանքի հետ կապված ոլորտները և կհասցեագրվեն նաև Գործուղությունների պկան հմտությունների և արտագաղթի ծրագրի միջոցով: ԵՎ նմանապես, Եվրոպայի սոցիալական օրակարգի մշակման ժամանակ նկատի կառնվեն առաջնահերթ այն գործողությունները, որոնք վերաբերում են սոցիալական ներգրավվածությանը և հավասար իրավունքներին:
- Գոյություն ունեցող Համայնքի ծրագրերի միջոցով ողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը շեշտադրող մի շարք ծրագրեր և գործողություններ կաջակցվեն և կխթանվեն:
- Սոկրատես, Լեոնարդո դա Վինչի և Երիտասարդական ծրագրերն այստեղ մեծ դերակատարում ունեն: Հանձնախումբը պարբերաբար կհզորացնի և կընդլայնի այն համատեղ քայլերը, որոնք աջակցում են այն ծրագրերը, որոնք ծագել են նշված ծրագրերից ավելի քան մեկից և կվարի ՀԿ-ների և ՓՄՁ-ների ակտիվ մասնակցությունը այս ծրագրերի նեքո: Որոշակի առաջնահերթություններ ևս կիրականացվեն, որպես էլեկտրոնային ուսումնառության գործողությունների պլանի մի մաս:
- Եվրոպայի սոցիալական ֆոնդը ողջ կյանի ընթացքում ուսումնառության ֆինանսավորման համար հիմնական համայնքային գործիքն է: Եվրոպայի տարածաշրջանային Զարգացման Պլանը ևս կարևոր ֆինանսավորման աղբյուր է: Հանձնախումբը, աշխատելով Անդամ Պետությունների հետ, կապահովի, որ 2003թ. ֆինանսավորման երկու աղբյուրների ամփափումը, ողջ կյանքում ուսումնառության առումով, հաշվի է առնում այս տեքստում բացահայտված առաջնահերթությունները: EQUAL Համայնքային նախաձեռնությունը նույնպես կարևոր դեր կունուենա ողջ կյանքում ուսումնառության համար մոտեցումների մշակման գործում:
- 6ՈՂՀետազոտությունների ծրագրի շրջանակը նոր հնարավորություններ կտա ողջ կյանքում ուսումնառության ոլորտում հետզոտությունները հզորացնելու համար և հետագա զարգացումները նախկին ծրագրերի ընթացքում ձեռք բերված փորձի վրա կառուցելու ուղղությամբ: Այս հետազոտությունը կիրականացվի հիմնականում 7-րդ առաջնահրթության նեքո («Քաղաքացիների գիտելիքների զարգացման հասարակությունում»)[66] : (Հետազոտության ենթական առաջնահերթությունները, ինչպես նաև դրանց հետագա գնահատումները բերվում են Հավելված 1-ում):

4.3. Ցուցանիշներ[67]

Ողջ կյնաքում ուսումնառության համար փոխկապակցված և համակողմանի ռազմավարություն մշակելու և իրականացնելու համար համեմատական տեղեկլությունները և վիճակագրական միջոցները խիստ անհրաժեշտ են: Ողջ մկյանքի ընթացքում ուսումնառության դաշտում վիճակագրությունը և ցուցանիշներն արդեն իսկ կազմում են ներկա նախաձեռնությունների կարևորագույն մասը, նպատակ ունենալով վերահսկել

սահմանած նպատակներին հասնելու գործընթացները և իրականացնել քաղաքականության նպատակները:

Որոշ առանցքային ցուցանիշներ արդեն գոյություն ունեն: 2001թ.-ի Կառուցվածքային ցուցանիշների Զեկույցը[68] առաջարկում է ողջ կյանքում ուսումնառության երեք ցուցանիշներ: Դրանք վերաբերվում են՝ ներդրումներին[69], մասնակցությանը և դպրոցը ժամանակից շուտ լքողներին: Այս ցուցանիշները, այլ հինգ ցուցանիշների[70] հետ միասին հնարավորություն են տալիս վերահսկելու վերը նշված երեք «միջամտություն պահանջող առաջնահերթությունների» գործընթացը, որոնք վերաբերվում են՝ ուսումնառության մեջ ժամանակի և գումարների ներդրմանը, հիմնարար հմտություններին և նորարարական մանկավարժությանը (էլեկտրոնային ուսումնառությունը[71] հատկապես համապատասխանում է այս առաջնահերթությունը):

Մշակվում են լրացուցիչ ցուցանիշներ[72] Եվրոպական Զբաղվածության ռազմավարության[73], Եվրոպական սոցիալական օրակարգի[74], Աշխատանքում որակի ապահովման[75] և Կոնկրետ նպատակների հերթական հաշվետվության շրջանակներում: Ավելին, Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության Աշխատանքային խումբը[76] ստեղծել է մի ամբողջական շրջանակ՝ այս ոլորտում վիճակագրական տվյալների ընդլայնման համար և սկսել է մի գործընթաց, որի նպատակն է վերանայել վիճակագրական մեթոդոլոգիաները, որպեսզի բացահայտել այս ոլորտում լրացուցիչ այն աղբյուրները, որոնք պետք է մշակվեն ԵՄ մակարդակում՝ կարճաժամկետ և միջնաժամկետ: Ի լրումն, 36 Եվրոպական երկրների փորձագետների խորհրդատվություններից[77] հետո, բացահայտվել են ողջ կյանքում ուսումնառության որոշ ոլորտներ, որոնց համար կմշակվեն որակի ցուցանիշներ:

Սահմանափակ քանակության նոր ցուցանիշների մշակումը հիմնված կլինի ուսանողակենտրոն մոտեցման վրա՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության մեջ: Մասնավորապես, այս աշխատանքը կնպաստի ողջ կյանքում ուսումնառության ոլոտում առկա որոշ բացերը լրացնելուն՝ տրամադրելով <u>որակական տեղեկատվություն</u> հավաքագրված անմիջապես սովորողներից: Այն նաև կխթանի <u>քանակական տեղեկատվությունների</u> աղբյուրների մշակմանը, մասնավորապես գնահատման և ճանաչման, տեղեկատվության ուղղորդման և խորհրդատվության, ուսուցիչների և դասավանդողների վերապատրաստման ոլորտներում[78]: Այս աշխատանքը կլրացնի ողջ կյանքում ուսումնառության ցուցանիշների մշակմանը՝ կապված աշխատունակության, հարմարվելու և սոցիալական ներգրավվածության հետ՝ Եվրոպական աշխատանքի ռազմավարության և Եվրոպական սոցիալական օրակարգի համատեքստում:

Նոր ցուցանիշների մշակման համակարգումը և համապատասխանացումը, սկզբունքայնորեն կվերահսկվի «ենթախմբերի» ցանցի միջոցով, որոնք կձևավորվեն լրացնելու Կրթության և Ուսուցման համակարգերի կոնկրետ նպատակների սահմանման հաշվետվությունը: Ենթախմբերը նաև կարևոր դեր կխաղան հաջողված փորձի բացահայտման և Անդամ Պետություններին ներկայացնելու գործում:

Անդամ Պետությունները և այլ Եվրոպական երկրները քաջալերվում են նպաստելու այս աշխատանքին: Մասնավորապես, Եվրոպական վիճակագրական կենտրոնի (ԵՎԿ) և Անդամ Պետությունները հետ համագործակցության համատեքստում: Այլ Եվրոպական երկրներ պետք է ձգտեն ունենալու իրենց սեփական վիճակագրական տվյալները և ցուցանիշների համակարգերը, որքան հնարավոր է համեմատելի: Նոր ցուցանիշներ

մշակելիս Հանձնախումբը կհիմնվի ազգային և միջազգային աղբյուրների վրա, մասնավորապես համագործակցելով OECD հետ: Առավելագույնս կօգտագործվեն ESS-ում գոյություն ունեցող աղբյուրները և կառուցվածքները, ինչպես նաև այլ ռեսուրսներ, ներառյալ Կրթության և ուսուցման վիճակագրությունների աշխատանքային կուսակցությունը, որը պատասխանատվություն կկրի տեխնիկական ասպեկտների և առկա ռեսուրսների համար:

4.4. Պահի պահպանում

Եվրոպական ոլորտի ողջ կյանքում ուսումնառության ստեղծումը անհրաժեշտ կլինի աջակցել գործընկերության, համակարգման և համագործակցության նորարարական ձևերով՝ բոլոր մակարդակներում բոլոր նրանց միջև, ովքեր ներգրավված կլինեն իրականացման մեջ: Փոխըմբռնման լայնածավալ խորհրդատվությունը հնարավորություն է ընձեռել սկիզբ դնել առաջին անգամ մի շարք համակարգման և խորհրդատվական համակարգերի: Սրանք ներկայացնում են ողջ կյանքում ուսումնառության սեկտորների և հետաքրքրությունների լայն շրջանակ ոչ միայն Եվրոպական մակարդակում, այլ նաև Անդամ Պետություններում, ԵՏՏ-ում և թեկնածու երկրներում՝ տարածաշրջանային մակարդակում և Եվրոպական ՀԿ-ների միջև և դրանց շրջանակներում, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների և սոցիալական գործընկերների մոտ: Հանձնաժողովը առաջարկում է համաձյան Կառավարության վերջնական փաստաթղթի, որ պետք է ստեղծվեն նորարարական և շարժուն կառույցները, որպեսզի համոզվեն, որ Հուշագրի հիմնա վրա ստեղծված պահը պահպանվում է բոլոր մակարդակներում:

- Եվրոպական մակարդակում քաղաքականության, ինչպես նաև ազգային քաղաքականությունների մշակումը պահանջում է ողջ կյանքում ուսումնառությամբ զբաղվող նախարարությունների ավագ ներկայացուցիչներից բաղկացած բարձր մակարդակում ձևավորված խմբի աշխատանք: Այս խումբը կօգնի ապահովել Ողջ կյանքում ուսումնառության ոլորտում մշակված միջոցառումների համապատասխանությունը, ներառյալ Կրթության և ուսուցման համակարգերի կոնկրետ նպատակների հերթական հաշվետվության իրականացմանը՝ Եվրոպական մակարդակում համապատասխան գործընթացներով, ռազմավարություններով և պլաններով: Որպես այդպիսի, նման պատասխանատվությունների շրջանակը պետք է գնահատի Ողջ կյանքում ուսումնառության բոլոր ոլորտները (դպրոցներ, ԲՈՒՀ-եր, մեծահասակների կրթություն, մասնագիտական ուսուցում, երիտասարդների ոչ ֆորմալ ուսումնառություն): Ազգային Ողջ կյանքում ուսումնառության համակարգողների ազգային խումբը, հիմնադրված Եվրոպական ընդարձակ խորհրդատվության համար, և «ենթախմբերը», որոնք հիմնադրվել են Կոնկրետ նպատակների հետևումը, կտրամադրեն աջակցություն բարձր մակարդակի խմբին:

- <u>Անդամ պետությունները, ԵՏՏ-ը</u> և թեկնածու երկրները պետք է երկարացնեն և որտեղ անհրաժեշտ է ամրապնդեն և ընդլայնեն արդեն ստեղծված միջ-նախարարական համակարգման կառույցները, խթանելու ներքին քաղաքականության համապատասխանությունը: Ընդհանուր առմամբ Ողջ կյանքում ուսումնառության խորհրդատվական ցանցերը պետք է կառուցվեն բոլոր մակարդակներում՝ ազգային, տարածքային և տեղական, որպեսզի նպաստեն իրականացման գործընթացը:

- Հանձնախումբը կշարունակի խորհրդատվություն տրամադրել <u>սոցիալական գործընկերներին</u> Ողջ կյանքում ուսումնառության ոլորտում: Ի լրումն, Հանձնախումբը կողջունի հետագա 29 սոցիալական գործընկերների վերանայումները և ներդրումները

այն առաջնահերթությունների վերաբերյալ, որ ներկայացվել են այս Զեկույցում՝ սոցիալական երկխոսության գործընթացի միջոցով:

• Հանձնախումբը նույնպես կմշակի խորհրդատվությունների առկա դաշտը քաղաքացիական հասարակության և ցկյանս ուսումնառության հարցռրող զբաղվող ՀԿ-ների հետ: Այն կվավերացնի այն, որ այս խորհրդատվությունների ամբողջությունը հավուր պատշաճի ներկայացնում են տարբեր դերակատարներ, ինչպես նաև բացառման վտանգի տակ գտնվող խմբերը:

• Եվրոպական ֆորումի կողմից ներկայացված Թափանցիկության աշխատանքային դաշտը, Որակի վերաբերյալ եվրոպական ֆորումը առաջարկված Կողմոնորշման վերաբերյալ Եվրոպական Ֆորումը պետք է տարորոշեն իրենց համապատասխան բնագավառների շրջանակը՝ հետագայում միասին աշխատելու և եմթախմբերի կողմից առաջ քաշված Հետևման Կոնկրետ Նպատակների ակնկալիքով:

• Հանձանժողովը կխրա;ուսի Cedefop, Eurydice և ETF հիմնվեմ ցկյանս ուսումնառության մասով իրենց առկա համագործակցության վրա, մասնավորապս աջակցելով ցկյանս ուսումնառության տվյալների բազայի մշակմանը (տես բաժին 4.1)

• Հանձնաժողովը, ցկյանս ուսումնառության քաղաքականություն մշակելիս, կշարունակի ակտիվորեն համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են OECD, Եվրոպայի Խորհուրդը, UNESCO:

5. Հաջորդ քայլեր

Ցկյանս ուսումնառության եվրոպական տարածաշրջան առաջնորդող հաջորդ քայլերը կլինեն՝

- Այս փաստաթղթի քննությունն ու քննարկումը Եվրոպական Խորհրդարանի, Տնտեսական և Սոցիալական հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից, որը կտանի յուրաքանչյուր հաստատության կողմից տեսանկյունների ձևավորմանը:
- Այս Զեկույցի հիմնական սկզբունքների և առաջարկների և Իսպանիայի Նախագահության ժամանակ Խորհրդի կողմից Եվրոպայի ցկյանս ուսումնառության տարածաշրջանի մասով արված մոտեցումների (Կրթության և երիտասարդության խորհուրդ և Զբաղվածության և սոցիալական քաղաքականության խորհուրդ) հաստատումը:
- Այս թեմանի վերաբերյալ Հանձնաժողովի ներդրումը Բարսելոնայի Գարնանային Խորհրդին, 2002թ. մարտ 15-16:
- Մինչև 2003թ վերջը Հանձնաժողովի կողմից Եվրոպական խորհրդին և Եվրոպական խորհրդարանին ներկայացված հաշվետվություն ցկյան ուսումնառության շրջանակի իրականացման վերաբերյալ:

– *Հավելված 1*

Հետազոտության և գնահատման հետ կապված առաջարկներ
(մինչև 2003թ-ի վերջը)

- Հանձանաժողովը կառաջարկի, որ շահերի, ծախսերի և կրթության մեջ ներդրված գումարներից ստացված եկամուտների հետազոտությունը հիմնված լինելով ներկա հետազոտության վրա[79] կաջակցվի Շրջանակային Ծրագրի 6-րդ հետազոտթույն կողմից[80]:
- Հանձնաժողովը կառաջարկի, որ ֆորմալ, ոչ ֆորմալ ուսումնառության համատեքստում կատարված հետազոտությունը և փորձարկումը և թե ինչպես պետք է այն ներգրավվի այս ուսումնառական գործընթացների մեջ կաջակցվի Շրջանակային Ծրագրի 6-րդ հետազոտթույն կողմից՝ Լեոնարդո դա Վինչի, Սոկրատես և Երիտասարդական ծրագրերի միջոցով և Ուսումնառության փորձնական գործունեության, Տեղեկատվական հասարակության տեխնոլոգիաների ծրագրի[81] և Հավասար Նախաձեռնության միջոցով: Սա պետք է նպաստի մանկավարժական արդյունավետ մոտեցումների զարգացմանը ուսումնառողների տարբեր խմբերի համար՝ ներառյալ թերներկայացված խմբերին[82]:
- Հանձնաժողովը կիրկանացնի շրջանակի վերաբերյալ իրականացվելիության ուսումնասիրության ազգային , տարածաշրջանային և ձեռնարկատիրությունների մակարդակներում ցկյանս ուսումնառության մեջ ներդրումների պետական և մասնավոր մակարդակների արձանագրման համար՝ թափանցիկության հասնելու ակնկալիքով: Սա հիմնված կլինի կանոնավոր կերպով տրամադրված տեղեկատվության վրա, օրինակ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության մեջ ռեսուրսների բաշխման և ուսումնառության տարբեր ճյուղերի միջև ուսումնառության իրկանացման վրա (մասնատված ըստ սեռի, տարիքային խմբի, կրթական նախկին ձեռքբերումների և թիրախային խմբերի):
- Հանձնաժողովը եվրոպական մակարդակում համագործակցելով սոցիալական գործընկերների հետ կիրկանացնի ՓՄՁ-ներում ուսումնառության վերաբերյալ հետազոտություն՝ մասնավորպես կենտրոնանալով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վրա՝ ներառյալ որակի և ձեռքբերման մակարդակները:
- Հանձնաժողովը աջակցի դեպքերի ուսումնասիրությունների վրա հիմնված գնահատմանը այն մասին, թե ինչ գործոններ կարող են ցկյանս ուսումնառության համագործակցությունը դարձնել արդյունավետ և կայուն:
- Հանձնաժողովը ռականացնի իրականալիության ուսումնասիրություն հիմնարար հմտությունների զարգացման և կանոնավոր կերպով կատարվող մեծահասակների գրագիտության ոսումնասիրության ԵՄ ընդլայնված մոտեցման վերաբերյալ:
- Հանձնաժողովը կգնահատի առկա մեխանիզմները՝ տարամդրելով անհատական իրավունքներ հիմնարար հմտություններ և/կամ ցկյանս ուսումնառության և ուսումնառության հնարավորություններին դրանց մասնակցելիության ազդեցության մասով:

- Հանձնաժողովը, հիմնվելով առկա ապացույցների վրա[83], կորոշարկի թեր ներկայացված խմբերի (կապված ռեսուրսների, ֆինանսական պատնեշների հետ, ներառյալ երեխայի խնամքի այլ հնարավորությունների, տրանսպորտի և ուսումնառությանն աջակցող նյութերի հասանելիության բացակայությունը) համար ցկյանս ուսումնառության մասնակցության պատնեշները և նման պատնեշների վերացմանը նպաստող հիմնական գործոնները:
- Ի հավելումն վերը նշված առաջարկների՝ Հանձնաժողովը կաջակցի ցկյանս ուսումնառության ոլորտում Տեղեկատվական Հասարակության Տեխնոլոգիական Ծրագրի 6-րդ Հետազոտական Շրջանակի Ծրագրի միջոցով ոկանացվող ավելի լայն հետազոտության:

Հավելված 1
Բառարան

Այս բառարանը տրամադրում է Զեկույցում կիրառված մի քանի առանցքային տերմինների բացատրությունները

ակտիվ քաղաքացիություն

իրենց համայնքում քաղաքացիների մշակութային, տնտեսական, քաղաքական/ժողովրդավարական և/կամ սոցիալական մասնակցությունը որպես մի ամբողջություն

հարմարվողականություն[84]

և ձեռնարկությունների համար և նրանց համար, ովքեր աշխատում են ձեռնարկություններում նոր տեպնոլոգիաներին, նոր շուկայական պայմաններին և նոր աշխատանքային ոճին հարմարվելու կարողություն

գնահատում

ընդհանուր մի տերմին, որը ընդգրկում է անհատի կամ խմբի գործունեության գնահատման/դատման բոլոր մեթոդների կիրառությունը

վկայական/դիպլոմ

պաշտոնական մի փաստաթուղթ, որը ֆորմալ ձևով հաղորդում է անհատի ձեռքբերումները

վկայում

վկայականների կամ դիպլոմների հանձման գործընթաց, որը պաշտոնապես ճանաչում է անհատի ձեռքբերումները՝ հետևելով գնահատման գործընթացին

քաղաքացիական հասարակություն

պետության և շուկայի հետ մեկտեղ հասարակության «երրորդ ճյուղը», որը ընդգրկում է կառույցներին, խմբերին և ասոցիացիաներին (կամ կառուցվածքային կամ ոչ ֆորմալ) և որը կարող է միջնորդ հանդիսանալ պետական մարմինների և քաղաքացիների միջև[85]

փոխլրացման/պարտադիր ուսումնառություն

Ուսումնառության այն իրականացումը, որը պետք է ձեռք բերվի պարտադիր ուսուցման ընթացքում:

կարողություն

արդյունավետ կերպով փորձառնության, գիտելիքի և որակավորումների կիրառման ունակություն

կորպորատիվ և սոցիալական պատասխանատվություն

Կորպորատիվ կառույցների նվիրումը սոցիալապես, տնտեսապես և բնապահպանական տեսանկյունից կայուն կերպով գործառնելու համար՝ միևնույն ժամանակ գիտակցելով ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները:

թվային բաժանարար

Անդունդ, որը առկա է տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաները արդյունավետ կիրառողների և չկիրառողների միջև:

թվային գրագիտություն

ՏՀՏ-ն վարպետորեն կիրառելու կարողություն

էլեկտրոնային ուսումնառություն

ուսումնառություն, որը աջակցվում է ՏՀՏ-ի կողմից

աշխատանքի տեղավորման կարողություն[86]

անհատի կարողությունների այն աստիճանը, որը ցուցադրում է անհատը աշխատանք գտնելիս, այն պահպանելիս և զբաղվածության կարողությունները թարմացնելիս

լիազորում

մարդկանց իրենց կյանքում և համայնքում կամ հասարակությունում պատասխանատու նախաձեռնություններ իրականացնելու իրավասություն տալու գործընթացը՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական մասով

եվրոպական կառավարում

եվրոպական գործերի վարչարարությունը՝ ավանդական քաղաքական մարմինների և «քաղաքացիական հասարակության», մասնավոր շահագրգիռ կողմերի, պետական կառույցների, քաղաքացիների փոխգործունեության միջոցով

ֆորմալ ուսումնառություն

ուսումնառություն, որը բնորոշ ձևով իրականացվում է կրթության կամ ուսուցման կառույցի կողմից, որը ուսումնառության նպատակի, ժամանակի և աջակցության մասով կառուցվածքային է և տանում է վկայականի տրամադրման:

Ֆորմալ ուսումնառությունը նպատակային է ուսումնառողի հեռանկարի տեսնակյունից

կողմնորոշում

Գործողությունների մի շարք, որը մշակված է մարդկանց աջակցելու համար իրենց կյանքի (կրթության, մասնագիտական և անձնական) վերաբերյալ որոշումներ կայացնելու և այդ որոշումները կիրառելու հարցում:

(կարողությունների) որոշարկում

Կարողությունների բնույթի և շրջանակների որոշման և սահմանման գործընթացը

ինֆորմալ ուսումնառություն

Ուսումնառություն, որը առաջ է գալիս ամենօրյա կյանքի գործունեությունից՝ կապված աշխատանքի, ընտանիքի կամ հանգիստ ժամանակի հետ: Այն, ուսումանռության նպատակի, ժամանակի և աջակցության առումով կառուցվածքային չէ և սովորաբար չի հանգեցնում վկայականի տրամադրման: Ինֆորմալ ուսումնառությունը կարող է լինել միջազգային, բաըց մեծամասսամբ այն միջազգային չէ (պատահական է):

միջսերնդային ուսումնառություն

Ուսումնառություն, որը ի հայտ է գալիս փորձառնության, գիտելիքի կամ կարողությունների սերնդից սերունդ փոխանցման միջոցով:

գիտելքահեն հասարակություն

Հասարակություն, որի գործընթացները և փորձը հիմնված է գիտելիքի արտադրության, բաշխման և կիրառման վրա:

ուսումնառող համայնք

Համայնք, որը լայնորեն առաջ է քաշում ուսումնառության մշակույթը՝ մշակելով արդյունավետ տեղական
համագործակցություն համայնքի բոլոր ճյուղերի միջև և աջակցում ու հրահրում է անհատներին ու կազմակերպություններին մասնակցել ուսումնառությանը:

ուսումնառության համաբերող

Ցանկացած մարդ, ով համաբերում է գիտելիքի և կարողությունների ձեռքբերումը՝ ստեղծելով ուսումնառության նպաստավոր պայմաններ՝ ներառյալ նրանց, ովքեր իրականացնում են ուսուցման և կողմնորոշման գործառույթ: Ողջ ուսումնառության գործընթացում համաբերողը կողմնորոշում է ուսումնառողին՝ ուղեցույցներ, դիտողություններ և խորհուրդ տալով, ինչպես նաև ի հավելումն աջակցելով գիտելիքի և կարողությունների մշակմանը:

ուսումնառության կազմակերպություն

Կազմակերպություն, որը բոլոր մակարդակներում (անհատական և խմբակային) խրախուսում է ուսումնառությունը և շարունակ փոխակերպում է ինքնին որպես արդյունք:

ուսումնառության շրջան

Շրջան, որում բոլոր շահագրգիռ կողմերը համագործակցում են ուսումնառության տեղական հատուկ կարիքները բավարարելու և համընդհանուր խնդիրներին
համատեղ լուծումներ տալու համար:

ցկյանս ուսումնառություն

Ամբողջ ուսումնառական գործողությունները, որոնք իրականացվել են ողջ կյանքի ընթացքում ՝ գիտելիքի, հմտությունների և կարողությունների բարելավման նպատակով՝ անձնական, քաղաքացիական, հասարակական և/կամ զբաղվածության հետ կապված հեռանկարով:

lifewide ուսումնառություն

Ուսումնառության բոլոր գործողությունները թե ֆորմալ թե ոչ ֆորմալ և թե ինֆորմալ: lifewide ուսումնառությունը ցկյանս ուսումնառության մի տեսակ է:

ոչ ֆորմալ ուսումնառություն

Ուսումնառություն, որ իրականացված չէ կրթության կամ ուսուցման հաստատության կողմից և սովորաբար չի հանգում վկայականի տրամադրման: Այն, համենայն դեպս, ուսումնառության նպատակների, ժամանակի և աջակցության մասով կառուցվածքային է: Ոչ ֆորմալ ուսումնառությունը միջազգային է ուսումնառողի հեռանկարի տեսակետից:

կարողությունների ճանաչում

1) *ֆորմալ ճանաչում՝*
կարողություններին պաշտոնական կարգավիճակի տրամադրման գործընթաց

- վկայականների տրամադրման միջոցով
- ձեռքբերված կարողությունների վավերացման, հավասարության և կրեդիտային միավորների տրամադրման միջոցով

և/կամ

2) *սոցիալական ճանաչում՝* կարողությունների արժեքի ճանաչումը տնտեսական և սոցիալական շահագրգիռ կողմերի կողմից

սոցիալական ներգրավում

Անհատների կամ անհատների խմբերի ներգրավումը հասարակություն՝ որպես քաղաքացիներ և կամ որպես տարբեր «հասարակական» սոցիալական ցանցերի անդամներ:

Սոցիալական ներգրավումը հիմնավոր կերպով արմատավորված է աշխատաշուկայի կամ տնտեսական ներգրավման մեջ:

արժևորել ուսումնառությունը

Ուսումնառության մասնակցության և ձեռքբերումների (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ) ճանաչման գործընթացը,
այնպես որ բարձրացնի դրան բնորոշ արժեքի
իրազեկությունը և պարգևատրի ուսումնառությունը:

---

[1] Աղբյուր՝ Աշխատուժի Հետազոտություն 2000

[2] «Ազգությունների բարեկեցություն. մրադկային և սոցիալական կապիտալի դերը», էջ 33, Թոմ Հիլի, Սիլվիան Côté, OECD 2001

[3] Անդամ Պետությունների մեծամասնության համար, LFS
մասնակցությունը վերաբերում է կրթության և ուսուցման մասնակցությանը 25-64 տարեկանների համար հետազոտությունից 4 շաբաթ աեաջ:
Պորտուգալիայի, Ֆրանսիայի և Նիդերլանդների համար, այնումենայնիվ, տվյալները հավաքագրված են, եթե մասնակցությունը անընդմեջ է և իրականցվում է հետազոտության ժամանակ:

[4] Աղբյուր՝ OECD; կրթության հաստատությունների վրա պետական և մասնավոր աղբյուրներից կատարված ուղղակի և անուղղակի ծախսեր, 1998

[5] Ֆեիրայի Եվրոպական Խորհուրդ, պարագրաֆ 33

[6] 1996թ-ի դեկտեմբերի 20 Խորհրդի Եզրակացությունները ցկյանս ուսւոմնառության ռազմավարության վերաբերյալ (97/C 7/02)

[7] Առկա են Անդամ Պետություններից, ԵՏՏ ու թեկնածու երկրներից և քաղաքցիական հասարակությունից ստացված
առաջարկությունների հակիրճ բովանդակությունը և վերլուծությունը

[8] 2001թ-ի փետրվարի 14-ի Կրթության Խորհրդի որոշումները, որոնք հիմնված են Հանձնաժողովի առաջարկի վրա (COM(2001) 59 վերջնական). Նպատակային Հաշվետվությունները հավանության են արժանացել 2001թ-ի Ստոքհոլմի Եվրոպական Խորհրդի կողմից:

[9] Հանձնաժողովի զեկույցը. Նախնական մանրազննին աշխատանքային ծրագիր Կրթության և ուսուցման համակարգերի հստակ նպատակների զեկույցի հետևման համար COM(2001) 501 վերջնական

[10] Սթոքհոլմի Եվրոպական Խորհրդի որոշումներ, պարագրաֆ 11

[11] Համապատասխան Ամստերդամի Պայմանագրի, որը ներկայացնում է զբաղվածության նոր տիտղոս, այս ռազմավարությունը կառուցված է թեմատիկ առաջնահերթությունների հիման վրա, հավաքված է 4 սյունակներով և նկարագրված է Զբաղվածության Ուղեցույցներում; հմմտ. 2001թ Զբաղվածության Համատեղ Հաշվետվություն COM(2001) 438 վերջնական: 2001թ Զբաղվածության ուղեցույցներ. Եվրոպական համայնքների պաշտոնական ամսագիր 24.1.2001 L 22/18

[12] 2000թ. դեկտեմբերի Նիցայի Եվրոպական Խորհուրդը հաստատեց Եվրոպական Սոցիալական Օրակարգը: հմմտ. Խրհրդին, Եվրոպական Խորհրդարանին, Տնտեսական և Սոցիալական Հանձնաժողովին և Շրջանների Հանձնաժողովին
ուղղված Հանձնաժողովի Զեկույցը COM(2000) 379 վերջնական

[13] 2001թ մարտի Սթոքհոլմի Եվրոպական Խորհուրդը հավանության արժանացրեց Հանձնաժողովի մտադրությունը ստեղծել Շարժունակության և Հմտությունների վերաբերյալ Առաջադրանքների

Կիրառում՝ գործունեության պլանը 2002թ մարտին Բարսելոնայի Գարնանային Խորհրդին ներկայացնելու ակնկալիքով: Հմմտ. Խրհրդին Հանձնաժողովի Զեկույցը «Եվրոպական աշխատաշուկաները բաց են
և հասանելի բնոլորի համար» COM(2001)116 վերջնական

[14] Որպես էլեկտրոնայյին Եվրոպայի Գործունեության Պլանի մաս, էլեկտրոնային ուսումնառության նախաձեռնությունը հետևում է Լիսաբոնի եվրոպական խորհդի եղրակացություններին, հմմտ. Հանձնաժողովի Զեկույցը՝ էլեկտրոնային ուսումնառություն՝ կերտելով վաղվա կրթությունը COM(2000) 318 վերջնական

[15] Տես Հանձնաժողովի Զեկույցը «Դեպի Եվրոպական հետազոտության տարածաշրջան» COM(2000) 6 վերջնական
և Հանձնաժողովի Զեկույցը «Շարժունակության Ռազմավարություն Եվրոպական Հեռազոտության Տարածաշրջանի համար», COM (2001) 331 վերջնական

[16] Հուշագրում կիրառված ցկյանս ուսումնառության սահմանումը « գիտելիքի, հմտությունների և կարողությունների բարելավման նպատակով անընդմեջ կատարվող նպատակային ուսումնառության բոլոր գործողությունները»:

[17] հմմտ. Բառարան (Հավելված 2)
[18] OECD-ի 2001թ Կրթության քաղաքականության վերլուծությունները նւոյնպես ուսումնասիրել են ցկյանս ուսումնառության մոտեցումների տարբերակիչ գծերը

[19]2001թ Զբաղվածության համատեղ զեկույցը նշում է, որ նման ռազմավարությունները տեղին են 7 Անդամ Պետություններում:
Զբաղվածության համատեղ զեկույց 2001 COM(2001) 438 վերջնական

[20] Հանձնաժողովի նախնական զեկույցը «Առաջ քաշել Եվրոպական Շրջանակ Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվություն» COM(2001) 366 վերջնակա

[21] Հմմտ. Նպատակային Զեկույցի 3.1 նպատակը «Ընդհանուր առմամբ կապ հաստատել աշխատանքային կյանքի և հասարակության միջև»

[22] «Պոտենցիալ» ուսումնառող տերմինը կիրառվում է նշել նրանց, ովքեր ակտիվորեն ներգրավված չեն ուսումնառության մեջ, օրինակ՝ նրան ում համար հասանելիությունը խնդիր է, օրինակ՝ հաշմանդամներ, կամ մարդիկ, ովքեր կարող են հեռու լինել կրթությունից, օրինակ՝ ծերերը: դա նաև կարող է վերաբերել այն մարդկանց, ովքեր չեն կապիտալացվում ինֆորմալ ուսումնառության վրա, որը տեղի է ունենում ամենօրյա գործողությունների ընթացքում:

[23] Տես 3.5 բաժինը

[24] Ուսումնառության համաբերող տերմինը կիրառվում է ողջ փաստաթղթում և վերաբերում է ուսուցիչներին, ուսուցանողներին և այլոց, ովքեր օգնում են մարդկանց ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրերում:

[25] Հմմտ. Նպատակների Զեկույցի Հետևման 1.5 նպատակը «Լավագույն կիրառել ռեսուրսները»

[26] Հմմտ. Նպատակների Զեկույցի Հետևման 2.1 նպատակը «Ստեղծել Ուսումնառության Մթնոլորտ»

[27] Տես Հանձնաժողովի Զեկույցը «Զբաղվածությունը և սոցիալական քաղաքականությունները. որկի վրա ներդրում անելու շրջանակ»

[28] Հմմտ. Նպատակների Զեկույցի Հետևման 2.2 նպատակը «Ուսումնառությունը դարձնել ավելի գրավիչ»

[29] Այս մոտեցումը վերցրված է Եվրոպական մակարդակից , տես 2001թ Զբաղվածության համատեղ զեկույցը

[30] Հմմտ. Նպատակների Զեկույցի Հետևման 2.2 նպատակը «Ուսումնառությունը դարձնել ավելի գրավիչ»

[31] Եվրոպական Խորհրդի և Հանձնաժողովի Առաջարկությունները (2001/613/EC)

[32] Այս բնագավառի աշխատանքը կներառի Որակավորումների Թափանցիկության Եվրոպական Ֆորումի և Մասնագիտական Ուսուցման Որակի Եվրոպական Ֆորումի գործողությունները

[33] Գործունեության առաջնայնության այս կարևորությունը հիմնականում վերաբերելով Եվրոպական նոր աշխատաշուկաներին կուրվագծվի Հանձնաժողովի առաջիկա Հմտություններ և Շարժունակություն Գործունեության Պլանում

[34] Ազգային Ակադեմիական Ճանաչման և Տեղեկատվության Կենտրոն

[35] Մասնագիտական կողմնորոշման համար Ռեսուրսների Ազգային կենտրոններ

[36] Գործունեության առաջնայնության այս կարևորությունը հիմնականում վերաբերելով Եվրոպական նոր աշխատաշուկաներին կուրվագծվի Հանձնաժքղթվւ առաջիկա Հմտություններ և Շարժունակություն Գործունեության Պլանում

[37] Սա հաշվի կառնի 'Tuning'
ծրագրի արդյունքներից բխող փորձառնությունները (2001թ. ապրիլ-2002թ. հունիս) և համատեղ Գործունեության Ծրագիրը
«Որակավորումների միջև կամուրջների ստեղծում՝ ցկյանս ուսումնառության համար ուսուցման կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգեր» (2001թ նոյեմբեր-2003թ. փետրվար)

[38]

Հանձնաժողովը նաև ստեղծում է մեկ քայլից բաղկացած շաժունակության կայք, որը կծառայի որպես հասանելիություն միջոց ուսումնառության հնարավորությունների պորտալին, ինչպես նաև երիտասարդության քաղաքականության վերաբերյալ EURES տեղեկատվական բազա և առաջարկված ինտերնետային պորտալ: Այս առաջնայնության գործունեության կարևորությունը,
հիմնականում վերաբերելով եվրոպական ներ աշխատաշուկաներին, կուրվագծվի Հանձնաժողովի առաջիկա Հմտություններ և Շարժունակություն Գործունեության Պլանում

[39] Այս առաջնայնության գործունեության
կարևորությունը,
հիմնականում վերաբերելով եվրոպական ներ աշխատաշուկաներին, կուրվագծվի Հանձնաժողովի առաջիկա Հմտություններ և Շարժունակություն Գործունեության Պլանում

[40] Զբաղվածության Ուղեցույցներ, 2001. Ուղեցույց 3

[41] «2000թ
նորարարությունների նախագիծը» , որը Լիսաբոնից հետո իրականացվել է EIB-ի կողմից, 12-15 միլլիարդ եվրոյի փոխառության ծրագրի միջոցով
ն'անակալի ազդեցություն կունենա ցկյանս ուսումնառության իրականացման համար:

[42] Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի եզրակացություններ, պարագրաֆ 26 և Զբաղվածության Ուղեցույցներ 2001, ցկյանս ուսումնառության վերաբերյալ ուղղահայաց նապատակ

[43] Ներկա ծրագրավորման ժամանակահատվածում (2000-2006) , Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը ցկյանս ուսումնառության զարգացման համար կներդնի նվազագույնը 12 միլլիարդ եվրո: Ի հավելումն ESF-ի Համայնքային Նախաձեռնության EQUAL-ն ի թիվս 8 թեմատիկ առաջնայնությունների ունի ցկյանս ուսումնառության առաջնայնություն, որի համար Անդամ պետությունները հավաքագրել են իր մեծությամբ երկրորդ թեմատիկ բյուջեն:

[44] Զբաղվածության Ուղեցույցներ 2001, Ուղեցույց 13

[45] Օրինակ՝ Անդամ Պետությունների
և OECD-ի կողմից իրականացված հետազոտություն

[46] COM (2001) 94 վերջնական: Խորհրդի Եվրոպական Խորհրդարանի եզրակացության առաջարկը, որը վերաբերում է Եվրոպական Համայնքի
2002-2006 հետազոտության, տեխնոլոգիական զարգացումների և ցուցադրական գործողությունների բազամամյա շրջանակային ծրագրին՝ ուղղված եվրոպական հետազոտության տարածաշրջանի տեղծմանը: Հետազոտության ծրագրի արդյունքները արդեն ֆինանսավորվում են Հանձնաժողովի կողմից, պետք է հաշվի առնվի Ծրագրի 5-րդ Շրջանակը:

[47] Հանձնաժողովի Առաջադրանքի Ուժի
Ցկյանս Ուսումնառության Չափման Հաշվետվությունը, Դպրոցական Կրթության Որակի Հաշվեըվությունը, Փորձագետների Խմբի Առաջընթացի Հաշվետվությունը Ցկյանս Ուսումնառության Որակի Չափորոշիչների վերաբերյալ
և Մասնագիտական Կրթության Որակի վերաբերյալ Ֆորումի կատարած աշխատանքները

[48] Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի եզրակացություններ, պարագրաֆ 26, Զբաղվածության Ուղեցույցներ 2001, էլեկտրոնային Ուսումնառության Գործունեության Պլան
COM(2001) 172 վերջնական, էջ 11

[49]

ԵՄ-ում ընդամենը 112 միլլիոն աշխատանք ունեցող մարդկանցից 74 միլլիոնը ներգրավված են SME-ներում, 38 միլլիոնը՝ ավելի քիչ քան 10 գործատուների կազմակերպություններում: Աղբյուր՝ «Ձեռնարկությունները Եվրոպայում 2001թ հրատարակություն, Eurostat»

[50]

Տես Հանձնաշողովի Զեկույցի Գործունեության երրորդ տողը՝ «Օգնել SME-ներին դառնալ թվային» (COM(2001) 136 վերջնական

[51] Սա հետևում է Լիսաբոնի Եվրոպական Խորհրդի Եզրակացությունների պահանջին, պարագրաֆ 29

[52] Հանձնաժողովը 2001թ սեպտեմբերին Անդամ պետությունների Ներկայացուցիչների հետ մեկտեղ հիմնեց ՏՀՏ Հմտությունների Մոնիտորինգի Խումբ,որպեսզի վերլուծի և մոնիտորինգի ենթարկի ՏՀՏ հմտությունների պահանջարկը, հասանելիությունը՝ հիմնված արդյունաբերության պահանջների վրա: Տես
http://europa.eu.int/comm/enterprise/policy/ictskills.htm

[53] Այս առաջնայնությունը համապատասխանում է Նպատակների Զեկույցի Հետևման 1.2 նպատակի խնդիրներից մեկին

[54] ԵՄ Հիմնարար Իրավունքների Հրովարտակ (2000/C 364/01)

[55] 2001 թ-ի Զբաղվածության Ուղեցույցներ, ESDIS –ի էլեկտրոնային ներառման զեկույց, Հանձնաժողովը և Անդամ Պետությունները
«Տեղեկատվական Հասարակության Զբաղվածության Սոցիալական Չափումների մասով Բարձրաստիճան Խումբ»

[56] 2001 թ-ի Զբաղվածության Ուղեցույցներ , Ուղեցույց 3.15, էլեկտրոնային Եվրոպա, էլեկտրոնային Ուսումնառություն (2001/C204/02) և էլեկտրոնային Ուսոիցման Գործունեության Պլանի նախաձեռնություն COM(2001) 172 վերջնական

[57] էլեկտրոնային ուսուցման նախաձեռնություն (2001/C 204/02); էլեկտրոնային գործողության ծրագիր COM(2001) 172 վերջնական

[58] Հարցերը կքննարկվեն եվրոպական մակարդակում, Նպատակների Զեկույցի Հետևման 1.5 նպատակի միջոցով «Ռեսուրսներից լավագույնս օգուտ քաղելը»-ը 4 հիմնական խնդիրներից մեկն է, որը սահմանվել է որպես «Աջակցել որակի գնահատման և ապահովման համակարգերը՝ կիրառելով չափանիշներ և հենանիշներ»՝ հիմնված լինելով Բոլոնիայի գորշընթացի և մասնագիտական կրթության որակի վերաբերյալ Ֆորումի արդյունքների վրա:

[59] 5-րդ Հետազոտական Շրջանակի Ծրագրի մաս, ՏՀՏ Ծրագրերի Հետազոտական նախագծերը բարձրացնում են ցկյանս ուսումնառությանը վերաբերող մի քանի հարցեր՝ ներառյալ տեխնոլոգիաներ, համակարգեր և ծառայություններ, ենթակառուցվածքներ և դիմումներ դպրոցների, համալսարանների, ուսուցման ձևաչափերի և ոչ ֆորմալ ուսումնառության համար:

[60] Պետք է հաշվի առնվեն հետազոտական ծրագրերի արդյունքները՝ արդեն իսկ ֆինանսավորվող Հանձնաժողովի կողմից 5-րդ Շրջանակի Ծրագրի մասով

[61] TEC 149 հոդվածը նշում է, որ «Համայնքը պետք է նպաստի կրթության որակի զարգացմանը՝ խթանելով Անդամ պետությունների միջև համագործակցությունը, և եթե հարկավոր է, նաև աջակցելով նրանց գործողություններին, մինչ Անդամ Պետությունները ամբողջությամբ պատասխանատվություն կրելով ուսուցման բովանդակության և կրթական համակարգերի կազմակերպման համար…»

[62] Տես Պայմանագրի 150-րդ հոդվածը

[63] Տես Պայմանագրի 125-րդ հոդվածը

[64] Տարբեր եվրոպական երկրներում ցկյանս ուսումնառության փորձի օրինակներ և ցկյանս ուսումնառության ցուցիչների հետագա մանրամասնություններ կարագրող փաստաթուղթը առկա է (Հանձնաժողովի ծառայությունների փաստաթուղթ, «Ցկյանս ուսումնառության փորձ և ցուցիչներ»)

[65] Գործողությունների իրականացումը, որը պետք է իրականացվի համայնքային մակարդակում ցկյանս ուսումնառության շրջանակներում, կֆինանսավորվի ծրագրերի և գործընթացների միջոցով, որոնք արդեն առաջարկված և ընդունված են և այնուամենայնիվ, այս փուլում չեն պահանջում հավելյալ ռեսուրսներ (ֆինանսական և մարդկային):

[66] Կրթության և ուսուցման հետազոտությունը նախնականապես կիրականացվի Առաջնայնություն 7-ի շրջանակներում («Աչքի ընկնող գիտելիքի հասարակության քաղաքացիները», կրթության և ուսուցման հասանելիությունը նույնպես ներառված է հետազոտության առաջնայնություններում՝ Գիտելիքահեն Եվրոպական Քաղաքականության ենթաթեմայի շրջանակներում)

[67] Տարբեր եվրոպական երկրներում ցկյանս ուսումնառության փորձի օրինակներ և ցկյանս ուսումնառության ցուցիչների հետագա մանրամասնություններ կարագրող փաստաթուղթը առկա է (Հանձնաժողովի ծառայությունների փաստաթուղթ, «Ցկյանս ուսումնառության փորձ և ցուցիչներ»)

[68] Կառուցվածքային ցուցիչների վերաբերյալ Հանձնաժողովի Զեկույցը ՝ ներկայացնելով 25 ցուցիչ, որպես Սինթեզի Զեկույցի հիմք, COM (2001) 619. Տես նաև COM (2000) 594

[69] Կրթության մասով կատարվող ծախսերը որպես ՀՆԱ տոկոսադրույք, աղբյուր՝ Unesco-OECD-Eurostat UOE, 25-64 տարիքային խմբի բնակչության տոկոսադրույքը, մասնակցությունը կրթության և ուսուցման գործընթացներում, աղբյուր՝ Աշխատուժի հետազոտություն, ցածր կրթությամբ կամ առանց կրթության և ուսուցանման 18-24 տարեկան բնակչության չափաբաժինը, աղբյուր՝ Աշխատուժի հետազոտություն

[70] Կրթության/ուսուցման մասով կատարվող ծախսումները որպես աշխատանքային ծախսերի տոկասադրույք, աղբյուր՝ Շարունակական մասնագիտական ուսուցման հետազոտություն, տնային տնտեսությունների ծախսումներ, աղբյուր՝ Տնային տնտեսությունների Հետազոտություն, մասնակցություն կրթության և ուսուցման գործընթացներին՝ ուսումնասիրության մասով, աղբյուր UOE և ուսումնառություն ձեռնարկությունում ուսումնառության տեսքով, դպրոցում աշակերտների միջին քանակը ըստ ցանցին միացված համակարգիչների, աղբյուր՝ Եվրոբարոմետր

[71] Էլեկտրոնային ուսումնառություն, աղբյուր՝ Կառուցվածքային ցուցիչների 2001թ Զեկույց, COM (2001) 619, ցուցիչ զարգացման մասով

[72] Ցկյանս ուսումնառության ցուցիչների վերաբերյալ մշակվելիք ավելի տեխնիկակն մանրամասները առկա են Հանձնաժողովի ծառայությունների փաստաթղթում «Ցկյանս ուսումնառության փորձ և ցուցիչ»

[73] EMCO ցուցիչների խումբը մշակում է համընդհանուր ցուցիչներ Եվրոպական Զբաղվածության Ռազմավարության Ուղեցույցները մոնիտորինգ անելու համար

[74] Սոցիալական Ապահովության Հանձնաժողովի Ցուցիչների Ենթախումբը պատրաստում է զեկույց Լաեքենի Եվրոպական Խորհրդի համար՝ սոցիալական բացառման վերաբերյալ համընդահուր համաձայնեցված ցուցիչների ցանկով

[75] COM(2001) 313 of 20.6.2001 «Զբաղվածություն և սոցիալակն Քաղաքականություններ. ըրակի վրա ներդրում անելու շրջանակ»

[76] Տես Առաջադրանքների Ուժի զեկույցը և ցկյանս ուսումնառության չափման վերաբերյալ Պարմա կոնֆերանսի ընթացակարգը http://forum.europa.eu.int/Public/irc/dsis/ceies/library?l=/seminars/measuring_lifelong&vm=detailed&sb=Title հղման մեջ

[77] Զեկույցը ներկայացվել է Ռիգայի կոնֆերանսի ժամանակ հունիս 28-29 և շուտով կհրատարակվի

[78] Առանցքային խնդիրները, որոնք վերաբերում են և որակական և քանակական ցուցիչներին, հետևյլն են՝ ինչպես են մարդիկ ուսումնռում, ուսումնառության ոլորտները, շարժառիթը, խոչընդոտները և արդյունավետությունը: Երեք ամենակրևոր քայլերը կլինեն մեծահասակների ուսումնառության վերաբերյալ 2003թ նեղ *ad-hoc* մոդուլի նախապատրաստումը, 2005թ Մեծահասակների Կրթության Հետազոտությունը, որը առաջարկվել է Հանձնաժողովի կողմից և ծրագրավորված երրորդ հետազոտությունը, որը վերաբերում է ձեռնարկություններում ուսումնառությանը: Հանձնաժողովը նպատակ կհետապնդի ներդաշնակել այլ հետազոտություններ ևս՝ համակցված հավաքագրման համակարգի մշակման ակնկալիքով:

[79] Օրինակ Անդամ Պետությունների և OECD-ի կողմից կատարված հետազոտություն

[80] Վերաբերելով Եվրոպական համայնքի բազմամյա 2002-2006 շրջանակային ծրագրին, հետազոտության, տեխնիակկան զարգացման և գործողությունների ներկայացման մասով, նպատակ ունի նպաստել Եվրոպական հետազոտության տարածաշրջանի ստեղծմանը: Առաջնային փեմատիկ տարածաշրջաններն են՝ «Քաղաքացիները և կառավարությունը եվրոպական գիտելիքահեբ հասարակությունում»: Պետք է հաշվի առնվեն հետազոտության ծրագրերի արդյունքները՝ ֆինանսավորվելով Հանձնաժողովի կողմից 5-րդ Շրջանակային Ծրագրի մասով:

[81] 5-րդ Հետզոտության Շրջանակային Ծրագիր. ՏՀՏ Ծրագրերի հետազոտական նախագծերը բարձրացնում են ցկյանս ուսումնառության վերաբերյալ մի քանի հարցեր՝ ներառյալ տեխնոլոգիաները, համակարգերը և ծառայությունները, ենթահամակրգերը և դպրոցների, համալսարանների, ուսուցման ձևաչափերի և ոչ ֆորմալ ուսումնառության կիրառման համար:

[82] Պետք է հաշվի առնել Հետազոտական ծրագրի արդյունքները, որոնք արդեն ֆինանսավորվում են Հանձնաժողովի կոմից 5-րդ Շրջանակային Ծրագրի մասով

[83] Օրինակ պատնեշների ուսումնասիրումը բարձրագույն կրթությունում մեծահասակների մասնկցության մասով նկատի է առնվել Հետազոտության Շրջանակային Ծրագրի կողմից:

[84] Տես Հանձնաժողովի Զեկույցը, որը հավանության է արժանացել Հատուկ Աշխատաքների Գագաթնաժողովին, որն իրականացրել է Եվրոպական Զբաղվածության Ռազմավուրությունը՝ http://europa.eu.int/comm/employment_social/elm/summit/en/papers/guide.htm

[85] Տես նաև ECOSOC-ի կողմից տրամադրված սահմանումը 1999թ. սեպտեմբերի 22 Կարծիքում, որը կկիրառվի քաղաքացիական հասարակության հետ երկխոսության և խորհրդատվության մասով առաջիկա Ուղեցույցներում (հետևելով Եվրոպական Կառավարման Վերջնական Փաստաթուղթը), Եվրոպական Համայնքների Պաշտոնական Ամսագ (1999/C329/10)

[86] Տես Հանձնաժողովի Զեկույցը, որը հավանության է արժանացել Հատուկ Աշխատաքների Գագաթնաժողովին, որն իրականացրել է Եվրոպական Զբաղվածության Ռազմավուրությունը՝ http://europa.eu.int/comm/employment_social/elm/summit/en/papers/guide.htm